

ՀՀ Պետական գնումների համակարգի մոնիտորինգային ամփոփ հաշվետվություն 2017- 2018թթ



PUBLIC PROCUREMENT



Սույն զեկույցի պատրաստումը և տպագրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ (դրամաշնորհ N19757): Չեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

NCPPR-NGO

Երևան 2019

Բովանդակություն

Գնումների համակարգում օրենսդրական զարգացումների մոնիտորինգ 2017-2018թթ.....	2
Այլ օրենսդրական հիմնախնդիրներ	5
Պետզնումների համակարգի միտումների ամփոփ վերլուծություն	8
2018թ. I կիսամյակի միտումների ուսումնասիրություն	11
2017 թվականի միտումների ուսումնասիրություն	12
Գնումների հաշվետվողականության կայքում ներկայացված տվյալների ուսումնասիրություն.....	14
2018թ. I կիսամյակում պետզնումների բաշխումն ըստ պատվիրատուների	15
Հաղթող մասնակիցների ուսումնասիրություն	17
Պետական գնումների միտումները 2017թ.....	21
Կայացած գնումների ուսումնասիրություն	23
ՀՔՀԱԿ-ի կողմից բաց աղբյուրներում ներկայացված տվյալների ուսումնասիրության արդյունքները...26	
2017թ. պետզնումների բաշխումն ըստ պատվիրատուների.....	27
Հաղթող մասնակիցների ուսումնասիրություն, 2017.....	28
Ռիսկային գնումներ/Կոռուպցիոն ռիսկեր պարունակող ձեռքբերումներ և ընկերություններ	33
Մասնակցության վերլուծություն	34
Պետզնումների համակարգում օտարերկրյա ընտրված մասնակիցների ուսումնասիրություն, 2017թ ...38	
Պետզնումների համակարգում հաղթողները և դրանց ուսումնասիրությունը ըստ չափերի, 2017թ	40
Ըստ կազմակերպության չափերի պետական գնումների համակարգում մասնակցության պատկերը...40	
Բողոքարկման համակարգի մոնիտորինգային հաշվետվություն.....	43
2017 թվականի միտումների ուսումնասիրություն	44
Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքարկման խորհրդի որոշումների մոնիտորինգ	46
2017-2018 թթ. միտումների ուսումնասիրություն.....	47
Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքարկման խորհրդի որոշումների մոնիտորինգ	50
Ոլորտային գնումներ.....	74
Պաշտպանություն բնագավառի բյուջետային ծախսերի ուսումնասիրություն	74
Մեթոդաբանությունը և մոնիտորինգի ժամանակահատվածը.....	74
Ոստիկանություն բնագավառի բյուջետային ծախսերի ուսումնասիրություն	88
Մեթոդաբանությունը և մոնիտորինգի ժամանակահատվածը.....	88
Ոլորտային գնումներ.....	95
Արդարադատության բնագավառի բյուջետային ծախսերի ուսումնասիրություն	95
Եզրակացություններ/Առաջարկություններ	109

Գնումների համակարգում օրենսդրական զարգացումների մոնիտորինգ 2017-2018թթ.

Մեր ՀԿ կողմից մի շարք օրենսդրական առաջարկություններ են ներկայացվել, որի արդյունքում 2017-2018թթ գնումների համակարգում նկատվել են մի շարք էական օրենսդրական զարգացումներ:

Մասնավորապես աղյուսակ 1-ում ներկայացված է ընդհանրական 2017թ նոյեմբերի 1-ից 2018թ դեկտեմբերի 20-ը ընդունված օրենսդրական ակտերի ցանկը

Աղյուսակ 1. Պետական գնումների համակարգում 2017թ. նոյեմբերից 2018թ. նոյեմբեր ընկած ժամանակահատվածում ընդունված իրավական ակտերը

Իրավական ակտի ընդունման ամսաթիվը և համարը	Ընդունող մարմնի անվանումը	Իրավական ակտի տեսակը	Իրավական ակտի վերնագիրը	Իրավական ակտի հակիրճ բովանդակությունը
16.11.2017թ. N 1454-Ն	Կառավարություն	որոշում	«Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման կարգը հաստատելու մասին»	Սույն որոշմամբ հաստատվել է լիազոր մարմնի կողմից հրավերների և հայտարարությունների ընտրանքային ուսումնասիրության կարգը, որով լիազոր մարմնը պետք է պարզի թե պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջները որքանով են համապատասխանում մրցակցության ապահովման և խտրականության բացառման չափորոշիչներին
<u>06.12.2018թ. N 600-Ա</u>	<u>Ֆինանսների նախարար</u>	<u>հրաման</u>	<u>«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին»</u>	<u>Ընդլայնվել են բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմերը: Որպես կողմ ներգրավվելու գործառույթներ են տրվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին և հասարակական կազմակերպություններին: Սահմանվել է, որ բողոքների մասին հրապարակվող հաշվետվությունը պետք է թվային տեղեկատվություն պարունակի և ևս դատական կարգով բողոքարկված որոշումների մասին:</u>
16.11.2018թ. N 566-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«ՀՀ ֆինանսների նախարարության 2018թ. մարտի 26-ի N 116-Ա հրամանում լրացում կատարելու մասին»	Սույն հրամանով ՀՀ ֆինանսների նախարարության 2018թ. մարտի 26-ի N 116-Ա հրամանով հաստատված «Գնումները համակարգողների 2018թ. շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների անցկացման ժամանակացույցը և

				խմբերը հաստատելու մասին» N 116-Ա հրամանով հաստատված հավելվածները լրացվել է 11-րդ և 12-րդ խմբերի ցանկերով
02.10.2018թ. N 483-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«ՀՀ Ֆինանսների նախարարի 2018թ. ապրիլի 26-ի թիվ 169-Ա հրամանում փոփոխություն կատարելու մասին»	Սույն հրամանով փոփոխվել է «Գնումները համակարգողի որակավորման շնորհման քննությունը կազմակերպող և անցկացնող պատասխանատու ստորաբաժանումներ սահմանելու, ստորաբաժանումների աշխատողների ցանկը և գործունեության կարգը հաստատելու և ՀՀ Ֆինանսների նախարարի 2017թ. օգոստոսի 3-ի թիվ 397-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանը, որով հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ և հաստատվել է «Քննության կազմակերպման և անցկացման համար պատասխանատու ստորաբաժանումներ աշխատողների ցանկը և գործունեության կարգը»:
26.04.2018թ. N 169-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«Գնումները համակարգողի որակավորման շնորհման քննությունը կազմակերպող և անցկացնող պատասխանատու ստորաբաժանումներ սահմանելու, ստորաբաժանումների աշխատողների ցանկը և գործունեության կարգը հաստատելու և ՀՀ Ֆինանսների նախարարի 2017թ. օգոստոսի 3-ի թիվ 397-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին»	Սույն հրամանով հաստատվել է՝ գնումները համակարգողի որակավորման շնորհման քննությունը կազմակերպող և անցկացնող պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների ցանկը, գնումները համակարգողի որակավորման շնորհման քննությունը կազմակերպող և անցկացնող պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների գործունեության կարգը և ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Ֆինանսների նախարարի 2017թ. օգոստոսի 3-ի թիվ 397-Ա հրամանը
17.05.2018թ. N 214-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«ՀՀ Ֆինանսների նախարարության 2018թ. մարտի 26-ի N 116-Ա հրամանում փոփոխություն կատարելու մասին»	Սույն հրամանով ՀՀ Ֆինանսների նախարարության 2018թ. մարտի 26-ի N 116-Ա հրամանով հաստատված «Գնումները համակարգողների 2018թ. շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների անցկացման ժամանակացույցը և խմբերը հաստատելու մասին» N 116-Ա հրամանով հաստատված հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ
28.03.2018թ. N 118-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«Էլեկտրոնային աճուրդով գնումների	Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ուղեցույց

			կատարման ուղղույցը հաստատելու մասին»	
26.03.2018թ. N 116-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«Գնումները համակարգողների 2018թ. շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների անցկացման ժամանակացույցը և խմբերը հաստատելու մասին»	Սույն հրամանով հաստատվել է թղթային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողների 2018թ. շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների անցկացման ժամանակացույցը և խմբերը համաձայն հավելվածների
03.03.2018թ. N 85-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«Գնումները համակարգողների 2018թ. շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագրերն ու թեմաները հաստատելու մասին»	Սույն հրամանով հաստատվել է. 1. Էլեկտրոնային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողների 2018թ. շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագրերն ու թեմաները՝ հավելված 1. 2. թղթային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողների 2018թ. շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագրերն ու թեմաները՝ հավելված 2. 3. գնումների համակարգողի ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատակիցների և գնումների համակարգողի որակավորում ունեցող ֆիզիկական անձանց 2018թ. շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագրերն ու թեմաները՝ հավելված 3.
02.03.2018թ. N 75-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«ՀՀ Ֆինանսների նախարարի մի շարք հրամաններում փոփոխություն կատարելու մասին»	Սույն հրամանով փոփոխություն է կատարվել ՀՀ Ֆինանսների նախարարի 2017թ. թիվ 237-Ա, 237-Ա, 238-Ա, 243-Ա, 244-Ա, 245-Ա, 246-Ա, 247-Ա, 248-Ա, 249-Ա, 250-Ա, 261-Ա, 262-Ա, 263-Ա, 264-Ա հրամաններում և այդ հրամանների 1-ին կետերի 1-3-րդ ենթակետերով հաստատված հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ
28.12.2017թ. N 75-Ա	Ֆինանսների նախարար	հրաման	«Գնումները համակարգողների որակավորումը դադարեցնելու մասին»	Սույն հրամանով դադարեցվել է հրամանի հավելվածում նշված գնումները համակարգողների որակավորումը
30.03.2018թ. ՀՕ-259-Ն	Ազգային ժողով	օրենք	«Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք	Փոփոխություններ են կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի տարբեր հոդվածներում: Փոփոխությունների հիմնական մասը վերաբերվում է օրենքի 6-րդ՝ «Գնումների գործընթացի

				բողոքարկումը» բաժնում ընդգրկված նորմերը
--	--	--	--	---

Հեղափոխությունից հետո մեր ՀԿ կողմից Ֆինանսների նախարարությանն է փոխացվել օրենսդրական առաջարկությունների փաթեթ, որի արդյունքում արդեն իսկ որոշակի օրենսդրական փոփոխություններ են կատարվել, մասնավորապես բողոքարկման կարգի «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» ՖՆ հրամանում,¹ ԵԱՏՄ-ում սև ցուցակում ներառված սուբյեկտների մասին տեղեկատվության ներկայացման առումով:²

Ի լրումն, ներկայումս մեր ՀԿ առաջարկությունների հիման վրա շրջանառվում է «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխությունների» նախագիծ³, որը մոտ ապագայում նախատեսվում է ներառել Կառավարության օրակարգ: Նախագիծը նպատակ ունի.

- Ա) բարձրացնել գնման գործընթացների արդյունավետությունը և գրավչությունը,
- Բ) նպաստել մրցակցության աստիճանի մեծացմանը,
- Գ) ընդլայնել սկսնակ և ՓՄՁ սուբյեկտների համար գնումների ընթացակարգերին մասնակցելու հնարավորությունները:

Այլ օրենսդրական հիմնախնդիրներ

Խնդրահարույց է հանրային կազմակերպությունների կողմից ինչպես հաշվետվողականության, այնպես էլ ԳՄՕ սահմանված պահանջների պահպանումը: Մասնավորապես բազմիցս մատնանշել ենք, որ հանրային կազմակերպությունները նույնիսկ «զլանում» են հաշվետվություններ ներկայացնել ինչի արդյունքում էլ նրանց վերաբերյալ տվյալները տեղ չեն գտնում գնումների հաշվետվություններում (ինչպես եռամսյակային, այնպես էլ տարեկան):

Ի լրումն հանրային կազմակերպությունները մեծամասամբ գնումներ են կատարում իրենց հետ փոխկապակցված ընկերություններից, օրինակ առկա է **ՀԷՑ-Տաշիր խումբ պայմանագրային կապ:** Առավել, մանրամասն այս կապը կներկայացվի մյուս մոնիտորինգային ծրագրի շրջանակներում:

Բացի այդ, ԳՄՕ 2-րդ հոդվածով ՀԷՑ-ը հանդիսանում է հանրային կազմակերպություն և պարտավոր է առաջնորդվել ԳՄՕ, մինչդեռ նրանք առաջնորդվում «սեփական» սկզբունքներով/նորմերով, օրինակ ԳՄՕ հոդված 23-ի 4-րդ կետով գնումը կարող է իրականացվել մեկ անձից եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը (մեկ միլիոն դրամ): ՀԷՑ-ը այս շեմը «սեփական» նախաձեռնությամբ վերանայել է՝ սահմանելով 50 մլն դրամ (տես գծապատկեր 1):

¹ <https://www.e-draft.am/projects/1247>

² Սա հատվածավորված լուծում է, ակնկալվում է, որ ապագայում կստանանք համակարգային լուծում:

³ <https://www.e-draft.am/projects/1271>

Գծապատկեր 1

www.ena.am/Upload/APP_1.pdf

	վերանորոգման նկատմամբ վերահսկողության ծառայությունների գնումը;	соответствующими авторами;
44.2.12.	խորհրդատվական ծառայությունների գնումը, ի կատարումն ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության հանձնարարականների առաջարկությունների պատրաստման նպատակով Ընկերության ղեկավարի որոշմամբ փորձագիտական ծառայությունների կողմից գիտահետազոտական աշխատանքների իրականացման գնումը;	44.2.12. закупка консалтинговых услуг, услуг экспертных организаций, на проведение научно-исследовательских работ по решению руководителя Общества в целях подготовки предложений по выполнению поручений Президента РА и Правительства РА.
44.2.13.	այն դեպքում, երբ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, ընդ որում, գնման նոր ընթացակարգերի անցկացումը նպատակահարմար չէ և ներկայացված մասնակցության հայտն ընդունելի է;	44.2.13. в случае если закупочная процедура была признана несостоявшейся, при этом, проведение новых закупочных процедур нецелесообразно и представленная заявка на участие в закупке приемлема;
44.2.14.	խմբի գործառնական պատասխանատվության կենտրոն հանդիսացող խմբի մասնագիտացված ընկերություններից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումը;	44.2.14. закупка товаров, работ, услуг у специализированных компаний Группы, являющихся центром функциональной ответственности в Группе;
44.2.15.	Գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների արժեքը չի գերազանցում <u>50.000.000</u>	44.2.15. когда стоимость товаров, работ или услуг, являющихся предметом закупки, не превышает <u>50.000.000</u> (пятьдесят
	<u>(հիսուն միլիոն) ՀՀ դրամը (առանց ԱԱՀ).</u>	<u>миллионов) драмов РА (без НДС):</u>
44.2.16.	Ընկերության ԳԿՄ որոշմամբ՝ այլ դեպքերում:	44.2.16. по решению ЦЗО Общества, в иных случаях.
44.3.	Եթե մարդկանց կանրին և առողջությանը սպառնացող և Ընկերությանը էական վնաս պատճառած (կամ կարող է պատճառել) արտակարգ հանգամանքների հետևանքով առաջացել է որոշակի արտադրանքի անհրա-	44.3. Если в вследствие чрезвычайных обстоятельств, угрожающих жизни и здоровью людей или нанесших (способных нанести) существенный материальный ущерб Обществу, возникла срочная потребность в

Հաջորդիվ, ԳՄՕ մի շարք հողվածներում նշվում է գնումների գործընթացին մասնակցության հավասար իրավունքների մասին, մինչդեռ ՀԷՑ կանոնակարգի կետ 16.9-ով սահմանվում է, որ հայտերի ներկայացման հրավերը պետք է պարունակի «Նախընտրություն ապրանքներ արտադրող, աշխատանքներ իրականացնող, ծառայություններ մատուցող հայտատուներին», եթե նման նախընտրությունը սահմանվում է Գնորդի կողմից, առանց մասնավորեցնելու, թե ինչ նախընտրության մասին է խոսքը և ինչպիսին են դրանց կիրառման պայմանները (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 2

- | | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> - գնման մասնակիցների գնման մասնակցության հայտերի դիտարկման և գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման վայրը և ամսաթիվը, այդ թվում անցկացված գնման ընթացակարգի արդյունքներով կնքվող պայմանագրի ստորագրման ժամկետները, - ապրանքների արտադրությունը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը իրականացնող գնման մասնակիցներին տրամադրվող առավելությունները, եթե այդպիսի առավելությունները սահմանված են Պատվիրատուի կողմից: | <ul style="list-style-type: none"> - место и дата рассмотрения заявок на участие в закупке Участников закупки и подведения итогов закупочной процедуры, в т.ч. сроки подписания договора, заключаемого по результатам проведенной закупочной процедуры, - преимущества, предоставляемые Участникам закупки, осуществляющим производство товаров, выполнение работ, оказание услуг, если такие преимущества установлены Заказчиком. |
| <p>16.10. Գնման փաստաթղթերը պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը.</p> <ul style="list-style-type: none"> - Պատվիրատուի կողմից ապրանքի, աշխատանքի, ծառայության որակին, տեխնիկական բնութագրերին, նրանց անվտանգությանը ներկայացվող պահանջներ, ապրանքների ֆունկցիոնալ բնութագրերին (սպառողական հատկություններին) ներկայացվող պահանջներ, ապրանքի չափսերին, փաթեթավորմանը, առաքմանը, աշխատանքների արդյունքներին ներկայացվող պահանջներ | <p>16.10. Закупочная документация должна содержать следующие сведения:</p> <ul style="list-style-type: none"> - установленные Заказчиком требования к качеству, техническим характеристикам товара, работы, услуги, к их безопасности, требования к функциональным характеристикам (потребительским свойствам) товара, требования к размерам, упаковке, отгрузке товара, к результатам работы и иные показатели и требования, связанные с определением соответствия пос- |

Դիտարկումներ: հանրային կազմակերպությունները չեն պահպանում հաշվետվողականության և թափանցիկության պահանջները:

Սև ցուցակում ներառված ընկերությունների մասով փոխգործակցությունը օրինակ ԵԱՏՄ գործընկեր երկրների, և/կամ ներդաշնակեցումը պատվիրատուների մոտ բացակայում է:

Առաջարկ: Պարտադրել հանրային կազմակերպություններին պահպանել գնումների մասով հաշվետվողականության և թափանցիկության պահանջները:

Առաջարկ: Ապահովել տվյալների ներդաշնակեցում, մասնավորապես ՀՎՀՀ-ի հիման վրա ինչի արդյունքում սև ցուցակում հայտնված մասնակիցները հնարավորություն չեն ունենա հայտեր ներկայացնել:

Պետզնումների համակարգի միտումների ամփոփ վերլուծություն 2018 I կիսամյակ

ԿԱՅԱՑԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Ըստ պաշտոնական տեղեկատվության 2018թ առաջին կիսամյակի ընթացքում հայտարարվել է 73981 ընթացակարգ, որի մասով ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Ընթացակարգերի քանակական բնութագիրը

Ցուցանիշ	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Կազմակերպված ընթացակարգերի թվաքանակը	1673	63686	8622	73981
Չկայացած ընթացակարգերի թվաքանակը	64	9386	376	9826
Կայացած ընթացակարգերի թվաքանակը	1542	50951	8206	60699
Չամփոփված ընթացակարգերի թվաքանակը	67	3349	40	3456

Ընդհանուր առմամբ կազմակերպված ընթացակարգերի շուրջ 13 տոկոսը չի կայացել:

2018թ I կիսամյակում կազմակերպված ընթացակարգերի շուրջ 13% չի կայացել: Համեմատության համար նշենք, որ 2017թ I կիսամյակում չէր կայացել կազմակերպված ընթացակարգերի 1.6%:

Պետք է նշել, որ պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, ՀՀ քաղաքային համայնքների և դրանց ենթակա պատվիրատուների կազմակերպած գնումների շուրջ 72 տոկոսը (53216 ընթացակարգ) իրականացվել է գնանշման հարցմամբ, իսկ 24 տոկոսը՝ (17950 ընթացակարգ) մեկ անձից գնման ձևով: Հաշվետու ժամանակահատվածում հայտարարվել են 2813 բաց, այդ թվում հրատապ բաց և երկփուլ մրցույթներ և 2 ընթացակարգ էլեկտրոնային աճուրդով:

2018թ I կիսամյակում ամփոփվել և կայացած է հայտարարվել 60699 ընթացակարգ: Չի կայացել 9826-ը, 3456 ընթացակարգ գտնվել է ընթացքում (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ամփոփված և կայացած ընթացակարգերի թվաքանակը՝ ըստ գնման ձևի

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց մրցույթ	437	885	969	2291
Հրատապ բաց մրցույթ	7	77	56	140
Երկփուլ մրցույթ	0	0	11	11
Գնանշման հարցում	676	37607	2090	40373
Էլեկտրոնային աճուրդ	0	0	2	2
Մեկ անձ	422	12382	5078	17882
Ընդամենը	1542	50951	8206	60699

Գիտարկում: Ինչպես նկատում ենք ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը շարունակում է մնալ խիստ բարձր, չնայած նախորդ տարվա I կիսամյակի համեմատ կա դրական դինամիկա, սակայն կայացած ընթացակարգերի մոտ 30 տոկոսն իրակազմվել է մեկ անձից գնման հիմքով:

Ի լրումն պետք է նշել, որ չնակած ԳՄՕ հողված 18-ի 5-րդ կետի համաձայն գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, բայց նրան բաժին է ընկնում կայացած գնման ընթացակարգերի ոչ ավել, քան 4 տոկոսը:

Չնայած ԳՄՕ հողված 18-ի 5-րդ կետի համաձայն գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, բայց այն կազմում է կայացած գնման ընթացակարգերի շուրջ 4 տոկոսը:

ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

2018թ. I կիսամյակի ընթացքում կատարված գնումների և հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է ընդհանուր առմամբ շուրջ 218.8 մլրդ դրամ⁴, որից 41 մլրդ դրամը՝ աշխատանքների, 75.6 մլրդ դրամը՝ ապրանքների և 102.3 մլրդ դրամը՝ ծառայությունների գծով:

Կատարված գնումների շուրջ 40% վերաբերել է ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 25-րդ կետի 5-րդ և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված ցանկերում⁵ ընդգրկված աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը: Այդպիսի գնումների նախահաշվային արժեքը կազմել է 87.4 մլրդ դրամ:⁶

Գնման մյուս բոլոր ձևերով 2017թ կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները, ՀՀ քաղաքային

⁴ Պետական կառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, 32 քաղաքային համայնքներ, դրանց ենթակայության տակ գործող 852 պատվիրատուներ:
⁵ Դրանք են գնումներ մեկ անձից, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով:
⁶ 0.2 մլրդ դրամն ուղղվել է աշխատանքների ձեռքբերմանը, 2.4 մլրդ դրամը՝ ապրանքների մատակարարմանը, իսկ 84.8 մլրդ դրամը՝ ծառայությունների մատուցմանը:

համայնքները, դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուները հայտարարել են 131.4 մլրդ դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որից 17.5 մլրդ դրամը՝ ծառայությունների, 73.1 մլրդ դրամը՝ ապրանքների, և 40.8 մլրդ դրամը՝ աշխատանքների գծով:

2017թ. ընթացքում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, ՀՀ քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարված 131.4 մլրդ դրամ նախահաշվային արժեքով գնումների դիմաց կնքվել է 91.4 մլրդ պայմանագիր, որի բացվածքը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. 2018-2017թթ | կիսամյակում կնքված պայմանագրերի բաշխումն ըստ գնման ուղղությունների

	2018թ I կիսամյակ	2017թ I կիսամյակ
Ընդամենը նախահաշվային, մլրդ դրամ	218.8	175.5
որից		
<i>Գնումներ մեկ անձից, մլրդ դրամ⁷</i>	87.4	87.4
Ընդամենը նախահաշվային, մլրդ դրամ	131.4	88.1
որից		
<i>Աշխատանքների նախահաշվային արժեքը, մլրդ դրամ</i>	40.8	33.2
<i>Ապրանքների նախահաշվային արժեքը, մլրդ դրամ</i>	73.1	35.0
<i>Ծառայությունների նախահաշվային արժեքը, մլրդ դրամ</i>	17.5	20.0
Ընդամենը կնքված պայմանագրեր, մլրդ դրամ	91.4	70.8
<i>Աշխատանքների գծով կնքված պայմանագրերի գումարը, մլրդ դրամ</i>	32.6	24.7
<i>Ապրանքների գծով կնքված պայմանագրերի գումարը, մլրդ դրամ</i>	44.4	28.9
<i>Ծառայությունների գծով կնքված պայմանագրերի գումարը, մլրդ դրամ</i>	14.5	17.2
<i>Չամփոփված գնումներ, մլրդ դրամ</i>	<u>6.2</u>	<u>4.7</u>

Հարկ է նշել, որ մեր կողմից պետգնումների համակարգի մոնիտորինգի ողջ ընթացքում պետական գնումներին մասնակցությունը մշտապես խնդրահարույց է եղել: 2017թ իրավիճակի էական լավացում չի նկատվել: Միաժամանակ, պետք է շեշտել, որ 2018թ I կիսամյակի ընթացքում ևս այս մասով դրական փոփոխություններ չեն նկատվում:

Պետգնումների համակարգում 2018թ I կիսամյակի ընթացքում միջին մասնակցության մասով դրական փոփոխություններ չեն նկատվում

⁷ ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 25-րդ կետի 5-րդ և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված ցանկերում ներառված գնումներ:

2018թ. I կիսամյակի միտումների ուսումնասիրություն

Ինչպես նկատում ենք, չնայած հեղափոխությանը, գնման գործընթացից հրաժարվածների մասով առկա է դրական դինամիկա, ինչն էլ ավելի է կարևորվում հեղափոխության համատեքստում: Միաժամանակ մտահոգիչ է միջին մասնակցության նվազումը (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. 2018 | կիսամյակում գնումների համակարգի միտումները

	2018 I կիսամյակ	2017	2017 I կիսամյակ
Ամփոփված ընթացակարգերը	70525 ⁸	25766	17232
Մասնակիցների թիվը	118434	47237	34567
որից մերժվել է	3022 (2.5)	1429 (3%)	727 (2%)
Միջին մասնակցությունը ⁹	1.68	1.83	2
Գնման գործընթացից հրաժարվածներ	4	10	9

Ինչպես նկատում ենք միջին մասնակցության ցուցանիշի մասով առկա են խնդիրներ: Այս մասով փորձել ենք ավելի մանրամասն ուսումնասիրություններ կատարել, որոնք ներկայացված են ստորև:

Հաջորդ խնդիրը, որին անդրադարձել ենք, դա մերժված հայտերի մասով ուսումնասիրությունն է: *Ընդհանրապես, մերժված հայտերի մասնաբաժնի ավելացումը խոսում է գնումների համակարգի պահանջներ-մասնակիցներ ոչ արդյունավետ համագործակցության մասին (տես աղյուսակ 6):*¹⁰

Աղյուսակ 6. Պետգնումների համակարգում մերժված մասնակիցների ուսումնասիրություն

	Այրանք	Աշխատանք	Ծառայություն	Ընդամենը
2018 I կիսամյակ	Ստացված գնման հայտեր			118434
	Մերժված հայտեր	2562	189	271
				3022 (2.6%)
2017 I կիսամյակ	Ստացված գնման հայտեր			34567
	Մերժված հայտեր	394	232	101
				727 (2.1%)

⁸ Նման մեծ տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս յուրաքանչյուր չափաբաժին դիտարկվում է որպես առանձին գնման ընթացակարգ:

⁹ Ներառում է ամփոփած՝ կայացած և չկայացած գնումները:

¹⁰ Պետք է նշել, որ այս դիտարկումը էլ ավելի է ամրապնդվում, քանի որ պետգնումներում նոր խաղացողների էական աճ չի նկատվում:

Անուղղակիորեն սա նաև կարող է պայմանավորված լինել տեխնիկական գործոններով, որի մասով քայլեր պետք է իրականացնել, օրինակ պատվիրատուի-մասնակից հարաբերությունների դասական օրինակ է **supplier debriefing**-ը:¹¹

2017 թվականի միտումների ուսումնասիրություն

ԿԱՅԱՑԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Ըստ պաշտոնական տեղեկատվության 2017թ ընթացքում հայտարարվել է 25767 ընթացակարգ, որի մասով ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Ընթացակարգերի քանակական բնութագիրը

Ցուցանիշ	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Կազմակերպված ընթացակարգերի թվաքանակը	1735	15629	8403	25767
Չկայացած ընթացակարգերի թվաքանակը	29	247	79	355
Կայացած ընթացակարգերի թվաքանակը	1706	15381	8324	25411
Չամփոփված ընթացակարգերի թվաքանակը	0	1	0	1

Ընդհանուր առմամբ 2017թ կազմակերպված ընթացակարգերի շուրջ 1.4 տոկոսը չի կայացել:

2017թ կազմակերպված ընթացակարգերի շուրջ 1.4% չի կայացել:

Պետք է նշել, որ պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, ՀՀ քաղաքային համայնքների և դրանց ենթակա պատվիրատուների կազմակերպած գնումների շուրջ 60 տոկոսը (15041 ընթացակարգ) իրականացվել է մեկ անձից գնման ձևով, իսկ 5 տոկոսը՝ գնանշման հարցման ձևով (1271 ընթացակարգ): 2017թ. բաց ընթացակարգերին (պարզեցված և բաց) է բաժին ընկնում շուրջ 3 տոկոսը:

¹¹ <https://www.oecd.org/governance/procurement/toolbox/search/guideline-model-format-supplier-debriefings.pdf>

Աղյուսակ 8. 2017թ ամփոփված և կայացած ընթացակարգերի թվաքանակը՝ ըստ գնման ձևի

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Բաց ընթացակարգեր	161	38	148	347
Պարզեցված ընթացակարգեր	126	68	232	426
Ճրջանակային համաձայնագրեր	194	7398	456	8048
Մրցակցային երկխոսություններ	1	1	1	3
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով	79	15	78	172
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու և մեկ անձից գնումներ	823	7112	7106	15041
Բաց մրցույթներ	45	8	9	62
Հրատապ բաց մրցույթներ	10	25	6	41
Գնանշման հարցումներ	267	716	288	1271
Ընդամենը	1706	15381	8324	25411

2017թ. ընթացքում կատարված գնումների և հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը կազմել է ընդհանուր առմամբ շուրջ 245.6 մլրդ դրամ¹², որից 48.6 մլրդ դրամը՝ աշխատանքների, 72.5 մլրդ դրամը՝ ապրանքների և 124.6 մլրդ դրամը՝ ծառայությունների գծով:

Կատարված գնումների շուրջ 42% վերաբերել է ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 25-րդ կետի 5-րդ և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված ցանկերում¹³ ընդգրկված աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը: Այդպիսի գնումների նախահաշվային արժեքը կազմել է 103.9 մլրդ դրամ:¹⁴

Գնման մյուս բոլոր ձևերով 2017թ կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները, ՀՀ քաղաքային համայնքները, դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուները հայտարարել են 141.7 մլրդ դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որից 23.5 մլրդ դրամը՝ ծառայությունների, 70 մլրդ դրամը՝ ապրանքների, և 48.1 մլրդ դրամը՝ աշխատանքների գծով:

2017թ. ընթացքում պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, ՀՀ քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարված 141.7 մլրդ դրամ նախահաշվային արժեքով գնումների դիմաց կնքվել է 122.8 մլրդ պայմանագիր: Դրանից 41.7 մլրդ դրամը՝ աշխատանքների, 60.7 մլրդ դրամը՝ ապրանքների և 20.3 մլրդ դրամը՝ ծառայությունների գծով:

¹² Պետական կառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, 47 քաղաքային համայնքներ, դրանց ենթակայության տակ գործող 997 պատվիրատուներ:

¹³ Դրանք են գնումներ մեկ անձից, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով:

¹⁴ 0.5 մլրդ դրամ ուղղվել է աշխատանքների ձեռքբերմանը, 2.4 մլրդ դրամը՝ ապրանքների մատակարարմանը, իսկ 101 մլրդ դրամը՝ ծառայությունների մատուցմանը:

Աղյուսակ 9. 2017թ նախահաշվային և կայացած պետզևուևների բնութագիրը

	2017թ
Ընդամենը նախահաշվային, մլրդ դրամ որից	245.6
<i>Գնումներ մեկ անձից, մլրդ դրամ¹⁵</i>	103.9
Ընդամենը նախահաշվային, մլրդ դրամ որից	141.7
<i>Աշխատանքների նախահաշվային արժեքը, մլրդ դրամ</i>	48.1
<i>Ապրանքների նախահաշվային արժեքը, մլրդ դրամ</i>	70.0
<i>Ծառայությունների նախահաշվային արժեքը, մլրդ դրամ</i>	23.5
Ընդամենը կնքված պայմանագրեր, մլրդ դրամ	122.8
<i>Աշխատանքների գծով կնքված պայմանագրերի գումարը, մլրդ դրամ</i>	41.7
<i>Ապրանքների գծով կնքված պայմանագրերի գումարը, մլրդ դրամ</i>	60.7
<i>Ծառայությունների գծով կնքված պայմանագրերի գումարը, մլրդ դրամ</i>	20.3
<i>Չամփոփված գնումներ, մլրդ դրամ</i>	<i>0.0</i>

2017թ պատվիրատուների կազմակերպած ընթացակարգերին ներկայացված 47237 հայտերից 1429-ը կամ 3% մերժվել է: Մերժվածների մեծ մասը եղել են ապրանքների մատակարարները:

Աղյուսակ 10. 2017թ մերժված հայտերի կառուցվածքը և մասնաբաժինը

2017	Այրանք	Աշխատանք	Ծառայություն	Ընդամենը
	Ստացված գնման հայտեր			
Մերժված հայտեր	792	472	165	1429 (3.0%)

Գնումների հաշվետվողականության կայքում ներկայացված տվյալների ուսումնասիրություն 2018 I կիսամյակ

Ըստ ARMEPS կայքի միջոցով գեներացվող տվյալների 2018թ I կիսամյակում կնքվել են 9205 պայմանագրեր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 140 մլրդ դրամի պարտավորություն (տես աղյուսակ 11):

¹⁵ ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 25-րդ կետի 5-րդ և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված ցանկերում ներառված գնումներ:

Աղյուսակ 11. Գնումների հաշվետվողականության կայքում ներկայացված կնքված պայմանագրերի ծավալը և կառուցվածքը, 2018թ | կիսամյակում

Գնման ընթացակարգը	Պայմանագրերի քանակը, հատ	Պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ
Ճրջանակային համաձայնագիր	2	0.1
Բաց մրցույթ	514	33.6
Գնանշման հարցում	4797	17.7
Հրատապ բաց մրցույթ	77	11.4
Գնում չհանդիսացող ծախս	82	0.5
Հրատապ մեկ անձ	25	0.0
Մեկ անձ	3706	76.5
Էլեկտրոնային աճուրդ	2	0.0
Ընդամենը	9205	140

Գնումների հաշվետվողականության կայքի¹⁶ տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ 2018թ. I կիսամյակի ընթացքում մեկ անձի մասնաբաժինը պայմանագրային ծավալում կազմում է ավելի քան 55%: Մեկ անձից ձեռքբերումները բավական մեծ են նաև քանակային տեսանկյունից, մասնավորապես պայմանագրերում մեկ անձի մասնաբաժինը կազմում է ավելի քան 40%:

2018թ I կիսամյակում մեկ անձից գնումները գումարային առումով կազմում են շուրջ 55%, իսկ քանակային առումով ավելի քան 40%:

2018թ. I կիսամյակում պետգնումների բաշխումն ըստ պատվիրատուների

Պետք է նշել, որ առկա է պատվիրատուների մեծ կենտրոնացվածություն, մասնավորապես խոշորագույն 5 պատվիրատուներին է բաժին ընկնում գնումների հաշվետվողականության կայքում ներկայացված պայմանագրերի գումարային առումով 81 տոկոսը (113 մլրդ դրամ), իսկ քանակային առումով 31 տոկոսը (2879 պայմանագիր): Աղյուսակ 12-ում ներկայացված են խոշորագույն 10 պատվիրատուները:

¹⁶ <https://armeps.am/ppcm/public/contracts>

Աղյուսակ 12. Պետգնումներում խոշորագույն պատվիրատուները

	Պատվիրատու	Կնքված պայմանագրերի արդյունքում գններացված պարտավորությունը, մլրդ դրամ	Մասնաբաժինը ընդհանուրում, %	Կնքված պայմանագրերի քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուրում, %
1	Առողջ. նախ.	63.6	45.5	1126	12.2
2	ՊՆ	27.5	19.7	590	6.4
3	Երևանի քաղաքապետարան	9.4	6.7	727	7.9
4	Ոստիկանություն	7.4	5.3	358	3.9
5	Տրանսպորտի, կապի և ՏՏ նախ.	5.3	3.8	78	0.8
6	ՊԵԿ	2.5	1.8	111	1.2
7	ԷԵԲՊՆ ջրային կոմիտե	2.1	1.5	39	0.4
8	ԱԱԾ	1.5	1.1	198	2.1
9	ԱԳՆ	1.4	1.0	177	1.9
10	ԱՆ քրեակատարողական վարչություն	1.4	1.0	94	1.0
	Խոշորագույն պատվիրատուների տասնյակ	122.2	87.3	3498	
	197	140		9205	

Այսպիսով, 2018 թ I կիսամյակում 9205 պայմանագրերը կնքվել են 197 պատվիրատուների կողմից: Պետք է նշել, որ դրական զարգացումներ կան տվյալների մուտքագրման մասով, ինչով էլ որոշակիորեն պայմանավորված է պատվիրատուների համեմատաբար ավելի մեծ թիվը: Մասնավորապես նախկինում, օրինակ առողջապահական ոչ բոլոր կազմակերպություններն էին առանձնացված (դրանք հիմնականում ներկայացվում էին համախմբված որպես առողջապահության նախարարության գնումներ): **Ներկայումս տվյալների մուտքագրումը այս մասով էականորեն բարելավվել է:**

Աղյուսակ 13. Խոշոր պատվիրատուների խոշորագույն մատակարարները

Առողջ. Նախ.	ՊՆ	Երևանի քաղաքապետարան		Ոստիկանություն		Տրանսպորտի կապի և ՏՏ			
		Ֆլեշ ՍՊԸ	5.1	Խաչիար ՍՊԸ	0.8	ՈԻԿոնվեստ ՍՊԸ	0.8	Կապավոր ՍՊԸ	1.7
Սբ. Գրիգոր Լուսավորիչ բժշկ. կենտրոն ՓԲԸ	4.9	Ֆլեշ ՍՊԸ	5.1	Խաչիար ՍՊԸ	0.8	ՈԻԿոնվեստ ՍՊԸ	0.8	Կապավոր ՍՊԸ	1.7
Էրեբունի բժշկական կենտրոն	3.2	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	2.1	Լիլիթ-87 ՍՊԸ	0.6	Ֆլեշ ՍՊԸ	0.7	Վառմաշ ՍՊԸ	1.3
Արաբկիր Բժշկական Համալիր-ԵԳԱԻ ՍՊԸ	3.0	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ	1.4	Արիովժին ՍՊԸ	0.5	Հայփոստ ՓԲԸ	0.6	Մեդրու ՃՇՇՁ ՍՊԸ	1.0
Աստղիկ բժշկական կենտրոն	2.1	Էլիտ Կապիտալ ՍՊԸ	1.2	Նարինյանյան ՍՊԸ	0.5	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	0.6	Ավտոնանապարհային մեքենաներ ՓԲԸ	0.2
Երևանի Մխ. Հերացու անվ. պետական բժշկ. համալս. հիմնադրամ	2.1	Էրիզ ՍՊԸ	1.1	Սահակյան շին ՓԲԸ	0.4	Էյ Էմ Փի Ջի գրուպ ՍՊԸ	0.5	Կապանի ՃՇՇ ՍՊԸ	0.2
Ընդամենը 5 խոշոր, մլրդ դրամ	15.3		10.9		2.8		3.2		4.6
Ընդամենը 5 խոշորի մասնաբաժինը ոլորտի ծախսերում, %	24		40		30		44		86

Ինչպես նկատում ենք հաղթողների առումով ամենակենտրոնացվածը Տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունն է, իսկ ամենաքիչ կենտրոնացվածն առողջապահության նախարարությունն է:

Հաղթող մասնակիցների ուսումնասիրություն

Մեր կողմից փորձ է կատարվել ուսումնասիրել թե ինչպիսին է եղել հաղթողների կառուցվածքը: 2018թ. I կիսամյակում 140 մլրդ դրամը բաշխվել է շուրջ 2000 հաղթողների միջև: Աղյուսակում 14-ում ներկայացված են 2018թ I կիսամյակում օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ հաղթողները:

Աղյուսակ 14. 2018թ | Կիսամյակում օտարերկրյա մասնակցությամբ ընկերությունների հետ կնքված պայմանագրերի բնութագիրը

Պատվիրատու	Հաղթողը	Ընթացակարգը	Գնման ուղղություն	Պայմանագրի գումարը, մլն դրամ
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	MLS International College	բաց մրցույթ	Օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտացված (ավիացիոն) անգլերեն լեզվի ուսուցման ծառայությունների ձեռքբերում	76.0
Արդարադատության Նախարարություն	Thomas Alice Anna Maria Barbara	զնանշման հարցում	Միջազգային փորձագետի վերապատրաստման ծառայություններ	2.5
Արտաքին գործերի նախարարություն	Աժանա Պյուբլիկ-Գրուպ Էս/Նետվորկ ընկերություն	մեկ անձ	Ներկայացուցչական ծախսեր	1314.4
Մարդու իրավունքների պաշտպան	Մարի Ամոս	մեկ անձ	իրավական խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ	0.5
Ոստիկանություն	Polska Wytwormia Papierow Wartosciowych S.A.	հրատապ բաց մրցույթ	նույնականացման անվանաքարտերի պատրաստման աշխատանքներ	215.7
Արտաքին գործերի նախարարություն	Ֆորմենտա ՍՊԸ	մեկ անձ	Ներկայացուցչական ծախսեր	53.7
Գյուղատնտեսության նախարարություն	Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն	զնանշման հարցում	անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	17.5
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	Морсвязьспутник ФГУП	մեկ անձ	ՀՀ տարածքում վթարված ՕՆ-ից տագնապի ազդանշանի ընդունման և տեղեկացման ծառայություններ	0.8
Սևանի համայնքապետարան	Սուարդի ԲԸ	բաց մրցույթ	Սևան համայնքի Չարենցի փողոցի ասֆալտապատման աշխատանքներ	61.8
Ոստիկանություն	Ռ.Դ. ՆԳՆ ԳԻԿ	Գնում չհանդիսացող ծախս	կապի ծառայություն	0.7
Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ	ООО "Комtex"	մեկ անձ	վերաբեռնավորման մեքենայի աշխատանքի ընթացքում հեղինակային հսկողություն և	63.2

			տեխնիկական աջակցություն	
Գյուղատնտեսության նախարարություն	ՏԴ Դոնսկոյ ԱզրոԽիմ Ցենտր ՍՊԸ	զնանչման հարցում	Գյուղատնտեսական սերմեր	16.7
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	SITTI SpA	զնանչման հարցում	Ջայնային տեխնիկայի վերանորոգման և պահպանման ծառայություններ	6.3
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	АО "Азимут"	բաց մրցույթ	Գալսկտիկա ՕԵՍ ավտոմատացված համակարգի սարքավորումների հետերաշխիքային սպասարկման ծառայություններ	68.4
Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ	ООО Харьковтурбосервис	զնանչման հարցում	Շոգետուրբինի պահեստամասեր	32.9
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	ЗАО "ПЕЛЕНГ"	զնանչման հարցում	Ջայնային ազդանշանների գրանցման և վերարտադրման համակարգ	39.3
ՊԵԿ	“Flexibility Integrity Professionalism Software“ Inc.	հրատապ բաց մրցույթ	մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ	329.8
Ոստիկանություն	Белхард групп ЗАО	մեկ անձ	լիցենզիաների կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ծառայություններ	1.4
Ընդամենը	18			2301.5

Մասնավորապես, Ադյուսակ 15-ում ներկայացված են 2018թ I կիսամյակի 10 ամենախոշոր հաղթողները:

Աղյուսակ 15. Խոշորագույն հաղթողների նկարագիրը

Հաղթող մասնակիցը		Գեներացրած պարտավորությունը, մլն դրամ	Հաղթած մրցույթների թիվը, հատ
1	Ֆլեշ ՍՊԸ	6457	85
2	Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ	4908	11
3	Հայաստանի Էլեկտրական ցանցեր ՓԲԸ	4452	50
4	Էրեբունի բժշկական կենտրոն	3225	10
5	Նատայի ֆարմ	2592	132
6	Արարկիր Բժշկական Համալիր-ԵԴԱԻ ՍՊԸ	3021	11
7	Երեւանի ՄԽ. Հերացու անվ. պետական բժշկ. համալս. հիմնադրամ	2068	15
8	Կապավոր ՍՊԸ	2041	6
9	Արփա-Սևան ԲԲԸ	1781	2
10	Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ ՓԲԸ	1630	9
Ընդամենը 10 խոշոր հաղթողներ		32175	331
10 խոշոր հաղթողների մասնաբաժինը		23	4
11	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ	1407	9
12	Սիփիլես Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	1406	80
13	Աժանս պյուրիկս-գրուպ էս/նետվորկ ընկերություն	1314	1
14	Վառմաշ ՍՊԸ	1312	2
15	Շտապբուժօգնություն ՓԲԸ	1298	1

Ինչպես նկատում ենք 2018թ I կիսամյակում 10 խոշոր հաղթողների նկատմամբ պատվիրատուները գեներացրել են շուրջ 32 մլրդ դրամի պարտավորություն, ինչը կազմում է ընդհանուրի 23 տոկոսը (ընդամենը 140 մլրդ դրամ ըստ ARMEPS-ի):

Քանակային առումով 10 խոշոր ընտրված մասնակիցները հաղթող են ճանաչվել 331 ընթացակարգերում, ինչը կազմում է ընդհանուրի 3.6% (9205):

Պետական գնումների միտումները 2017թ

Մեր կողմից պարբերաբար բարձրաձայնվել են, որ օրենքով սահմանված պահանջները չեն պահպանվել և չեն պահպանվում, ինչն առավել ակնառու է հանրային կազմակերպությունների պարագայում (Աղյուսակ 16):

Աղյուսակ 16. Տվյալներ տրամադրած պատվիրատուների կառուցվածքը 2013-2017թթ.

Վերլուծության օբյեկտը	2013	2014	2015	2016	2017
Պետական կառավարման մարմիններ և պետական հիմնարկներ	78	75			
Քաղաքային համայնքներ	35	22	22	49	47
Պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների ենթակայության տակ գտնվող պատվիրատուներ	243	327	435	409	374
Քաղաքային ենթակայության տակ գտնվող պատվիրատուներ	535	473	498	667	623
Հանրային կազմակերպություններ	2	4	3	1	1

Ինչպես 2016թ., այնպես էլ 2017թ. հանրային կազմակերպություններից կատարած գնումների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացրել միայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն: Ըստ այդմ, ՀԷՑ ՓԲԸ-ն 2017թ. կազմակերպել է 22.8 մլրդ դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր:

Կազմակերպված գնումները վերաբերել են մեծամասամբ ապրանքների ձեռքբերմանը (տես աղյուսակ 17):

Աղյուսակ 17. 2017թ. ՀԷՑ ՓԲԸ-ի կազմակերպված գնումների և կնքված պայմանագրերի կառուցվածքը

	2017 նախահաշվային գներ	2017 կնքված պայմանագրեր
Ապրանքներ, մլրդ դրամ	12.7	12.7
Ծառայություններ, մլրդ դրամ	6.2	6.2
Աշխատանքներ, մլրդ դրամ	3.7	1.7
Ընդամենը	22	21

Ինչպես նկատում ենք Աղյուսակ 2-ից ՀԷՑ ՓԲԸ-ն 2017թ. կնքել է շուրջ 21 մլրդ դրամի պայմանագրեր: 2017թ ՀԷՑ ՓԲԸ-ի կազմակերպած գնումների և կնքված պայմանագրերի տարբերությունը կազմում է 121 մլն դրամ, կամ շեղումը կազմել է 0.6%:

Համաձայն 2017թ. գնումների գործընթացի վերաբերյալ ՀՀ ՖՆ հաշվետվության կողմից գնումների համակարգի ներկայացված տվյալների¹⁷ 2017թ պլանավորվել են 245 մլրդ դրամի նախահաշվային արժեքով ձեռքբերումներ (աղյուսակ 18):

Աղյուսակ 18. 2017թ. ընթացքում կատարված գնումների և հայտարարված ընթացակարգերի նախահաշվային արժեքը ըստ ուղղությունների

	2017
Ծառայություն, մլրդ դրամ	125
Աշխատանք, մլրդ դրամ	48
Ապրանք, մլրդ դրամ	72
Ընդամենը	245

Կատարված գնումների շուրջ 42% վերաբերել է ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 25-րդ կետի 5-րդ և ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 23-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված ցանկերում (դրանք են գնումներ մեկ անձից, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով) ընդգրկված աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը:

Նման ոչ մրցակցային գնումները պլանավորվել են 104 մլրդ դրամի չափով (տես աղյուսակ 19):


Աղյուսակ 19. Պլանավորված ոչ մրցակցային գնումների ծավալը, 2017թ.

	2017
Մասնաբաժինը, %	42
Նախահաշվային արժեքը, մլրդ դրամ	104
որից	
Աշխատանք, մլրդ դրամ	0.4
Ապրանք, մլրդ դրամ	2.4
Ծառայություններ, մլրդ դրամ	101

Գնման մյուս բոլոր ձևերով 2017թ. կատարված գնումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրած պետական կառավարման մարմինները, պետական հիմնարկները, ՀՀ քաղաքային համայնքները, դրանց ենթակայության տակ գործող պատվիրատուները հայտարարել են 142 մլրդ դրամ նախահաշվային արժեքով ընթացակարգեր, որից 23 մլրդ դրամը՝ ծառայությունների, 70 մլրդ դրամը՝ ապրանքների, և 48 մլրդ դրամը՝ աշխատանքների գծով (Գծապատկեր 3):

¹⁷ Ներառված են պետական կառավարման մարմինները և պետական հիմնարկները, 47 քաղաքային համայնքները, դրանց ենթակայության գտնվող 997 պատվիրատուները (այդ թվում՝ 374-ը պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների, 623-ը՝ քաղաքային համայնքների ենթակայության) և 1 հանրային կազմակերպություն:

Գծապատկեր 3. 2017թ. ընթացքում հայտարարված ընթացակարգերը՝ ըստ նախահաշվային արժեքների



Կայացած գնումների ուսումնասիրություն

Քանակային ուսումնասիրություն

Ըստ տրամադրված տվյալների 2017թ աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գծով պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, ՀՀ քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարվել է 25767 ընթացակարգ, որից 1735-ը՝ աշխատանքների կատարման, 15629-ը՝ ապրանքների ձեռքբերման և 8403-ը՝ ծառայությունների մատուցման համար: Պետք է նշվել, որ 25767 ընթացակարգերից 355-ը չեն կայացել, այսինքն կայացել են 25411 ընթացակարգ (աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Ամփոփված և կայացած ընթացակարգերի թվաքանակը՝ ըստ գնման ձևի

Ցուցանիշների անվանումները	Աշխատանք	Ապրանք	Ծառայություն	Ընդամենը
Կայացած ընթացակարգերի թվաքանակը	1706	15381	8324	25411
Բաց ընթացակարգեր	161	38	148	347
Պարզեցված ընթացակարգեր	126	68	232	426
Ծրջանակային համաձայնագրեր	194	7398	456	8048
Մրցակցային երկխոսություններ	1	1	1	3
ԲԸ հայտարարելով	79	15	78	172
ԲԸ առանց հայտարարելու և մեկ անձից գնումներ	823	7112	7106	15041
Բաց մրցույթներ	45	8	9	62
Հրատապ բաց մրցույթներ	10	25	6	41
Չհանձնան հարցումներ	267	716	288	1271

Գումարային ուսումնասիրության

Ըստ տրամադրված տվյալների 2017թ աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գծով պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, ՀՀ քաղաքային համայնքների և դրանց ենթակայության տակ գտնվող պատվիրատուների կողմից հայտարարված 141 մլրդ դրամ նախահաշվային գնումների դիմաց կնքվել է 122.8 մլրդ դրամի պայմանագիր (աղյուսակ 21):

Աղյուսակ 21. 2017թ. կնքված պայմանագրերի կառուցվածքը

	2017
Աշխատանք, մլրդ դրամ	41.7
Ապրանք, մլրդ դրամ	60.7
Ծառայություններ, մլրդ դրամ	20.3
Ընդամենը, մլրդ դրամ	122.8

Կնքված պայմանագրերի բաշխումն ըստ գնման ընթացակարգերի ներկայացված են աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22. 2017թ. կնքված պայմանագրերի բաշխումը ըստ ընթացակարգերի

Ցուցանիշների անվանումները	Պետ. կառ. մարմին և պետ. հիմնարկ	Քաղաքային համայնք	Պետ. կառ. մար.ի և պետ. հիմնարկների ենթակայության ներքո պատվիրատուներ	Քաղ.համայնք. ենթակայության ներքո պատվիրատուներ
Բաց ընթացակարգեր, մլրդ դրամ	9.7	8.6	1.3	0.3
Պարզեցված ընթացակարգեր, մլրդ դրամ	0.4	1.0	0.7	0.1
Ծրջանակային համաձայնագրեր, մլրդ դրամ	44.8	2.9	3.6	7.9
Մրցակցային երկխոսություններ, մլրդ դրամ	0.6	0.0	0.0	0
Բանակցային ընթացակարգեր հայտարարելով, մլրդ դրամ	6.0	0.1	1.0	0
Բանակցային ընթացակարգեր առանց հայտարարելու և մեկ անձից գնումներ, մլրդ դրամ	4.7	5.2	1.8	0.8
Բաց մրցույթներ, մլրդ դրամ	3.8	0.2	0	0
Հրատապ բաց մրցույթներ, մլրդ դրամ	8.2	0.0	0	0
Գնանշման հարցումներ, մլրդ դրամ	5.7	1.3	0.9	0.2
Ընդամենը, մլրդ դրամ	84.2	19.6	9.5	9.4
Ընդամենը, մլրդ դրամ	122.8			

Ըստ տրամադրված տվյալների պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, քաղաքային համայնքների ենթակայության ներքո պատվիրատուների կողմից կնքվել են ընդհանուր առմամբ շուրջ 173.6 մլրդ դրամի պայմանագրեր (տես աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Պատվիրատուների կնքված պայմանագրերի կառուցվածքը

	Պետական կառ. մարմին. և պետ. հիմնարկ.	Քաղաքային համայնք	Այլ պատվիրատուներ	Ընդամենը
Կնքված պայմանագրերի ծավալը, մլրդ դրամ	122.9	19.5	31	173.6
Մեկ անձից ձեռքբերումների ծավալը, մլրդ դրամ ըստ				91.3

ՀԲՀԱԿ-ի կողմից բաց արդյունքներում ներկայացված տվյալների ուսումնասիրության արդյունքները

Համաձայն գնումների հաշվետվողականության կայքի¹⁸ տվյալների՝ 2017թ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը պետական գնումների համակարգում կնքվել են 13070 հատ պայմանագրեր, որոնց արդյունքում գեներացվել են շուրջ 178 մլրդ դրամի պարտավորություններ (աղյուսակ 24):

Աղյուսակ 24. Գնումների հաշվետվողականության կայքում ներկայացված կնքված պայմանագրերի ծավալը և կառուցվածքը

Գնման ընթացակարգը	Պայմանագրերի քանակը, հատ	Պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ
Ծրջանակային համաձայնագիր	2711	35
Պարզեցված ընթացակարգ	207	0.6
Բաց ընթացակարգ	453	15.2
Բաց մրցույթ	111	10
Գնանշման հարցում	1961	9.6
Հրատապ բաց մրցույթ	84	7.9
Գնում չհանդիսացող ծախս	40	0.0
Բանակցային ընթ. հայտարարելով	177	10
Բանակցային ընթ. առանց հայտարարության	5600	81
Հրատապ մեկ անձ	64	1.3
Մեկ անձ	1662	6.4
Ընդամենը	13070	178

2017թ. Բաց տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ կատարվել են 7326 ոչ մրցակցային գնումներ (բանակցային ընթ. առանց հայտարարության, մեկ անձ և հրատապ մեկ անձ) ինչի արդյունքում գեներացվել է 89 մլրդ դրամի պարտավորություն: **Այսպիսով, ոչ մրցակցային գնումները կազմել են բաց տվյալների շուրջ 50 տոկոսը:**

¹⁸ <https://armeps.am/ppcm/public/contracts>

2017թ. պետգնումների բաշխումն ըստ պատվիրատուների

Պետք է նշել, որ առկա է պատվիրատուների մեծ կենտրոնացվածություն, մասնավորապես խոշորագույն 5 պատվիրատուներին է բաժին ընկնում գնումների հաշվետվողականության կայքում ներկայացված 178 մլրդ պայմանագրերի 76 տոկոսը, կամ 135 մլրդ դրամը (տես աղյուսակ 25):

Աղյուսակ 25. Պետգնումներում խոշորագույն պատվիրատուները

Պատվիրատու	Կնքված պայմանագրերի արդյունքում գեներացված պարտավորությունը, մլրդ դրամ	Մասնաբաժինը ընդհանուրում, %	Կնքված պայմանագրերի քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուրում, %
1 Առողջ. նախ.	74.9	42	2740	21
2 ՊՆ	31.9	18	765	5.8
3 Ոստիկանություն	11.9	6.7	589	4.5
4 Տրանսպորտի, կապի և ՏՏ նախ.	7.9	4.5	163	1.2
5 Երևանի քաղաքապետարան	7.8	4.4	812	6.2
Խոշոր հնգյակ	134.6	75.6	5069	38.8
146	178		13070	

Մեր կողմից փորձ է կատարվել ուսումնասիրել, թե ովքեր են եղել այս 5 խոշորագույն պատվիրատուների ամենախոշոր մատակարարները (տես աղյուսակ 26):

Աղյուսակ 26. Խոշոր պատվիրատուների խոշորագույն մատակարարները

Առողջ. նախ.	ՊՆ	Ոստիկանություն	Տրանսպորտ	Երևանի քաղաքապետարան					
Սբ. Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ	4.8	Ֆելե ՍՊԸ 5.3	«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ 3.5	Սուարդի ԲԸ 1.8	Դավիթյան ՍՊԸ 0.8				
Էրբրունի բժշկական կենտրոն	3.4	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ 1.6	Ֆելե ՍՊԸ 1.4	Միսիանի ԲՈՒԿՏ ՍՊԸ 1.1	ԱՎԱ-2000 ՍՊԸ 0.4				
Աշտարակի բժշկական կենտրոն ՓԲԸ	2.9	«Ավանգարդ» ՍՊԸ 1.0	Լեհական արժեթղթերի արտադրամաս բաժնետիրական ընկերություն ՀՄ «Հայփոստ» ՓԲԸ 0.7	«Ոսմար» ՍՊԸ 1.1	Նարիմանյան ՍՊԸ 0.4				
«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	2.9	ՄոսԷսթրո ՍՊԸ 1.0		Ճանապարհ ՍՊԸ 0.8	ԿԱՊԱՎՈՐ ՍՊԸ 0.4				
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	2.1	Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում ՓԲԸ 0.8	Բիլլ Սթոուն ՍՊԸ 0.6	ԼԻԼԻԹ-87 ՍՊԸ 0.6	Փարկինգ Սիթի Սերվիս ՓԲԸ 0.4				
9.1	16.2	5.6	9.7	3.8	6.8	3.1	5.4	1.3	2.2

Բացի այդ, ուսումնասիրվել է նաև թե ինչ գնման ուղղությունների ձեռքբերման վրա է ծախսվել պետական միջոցները: Քանի որ ծախսային ուղղությունների մասով առկա են նշանակալի թերություններ, մեր կողմից կատարվել են որոշ խմբավորումներ (տես աղյուսակ 27):

Աղյուսակ 27. Գնման ուղղություններն ըստ առարկայի, 2017

	Ծախսային ուղղությունը	Ծախսային ուղղության վրա կատարված ծախսերը, մլրդ դրամ	Մասնաբաժինը, %
1	Առողջապահություն (ներառյալ ապահովագրություն)	70.6	40
2	Ծին. աշխատանքներ	31.2	17
3	Վառելիք	11.5	6
4	Սննդամթերք	9.7	5
5	Տպագրություն	7.4	3.8
6	Մեքենասարքավորումների ձեռքբերում	5.1	3
7	Հագուստեղեն	4.6	3
8	Վերահսկող և հեռարձակող համակարգեր	3	2
9	Փոստային ծառայություններ	1.1	1
10	Ճաշկերույթներ, մեդալներ, ամանորյա խրախճանքներ	0.5	0.3
	Ընդամենը 10 խոշորներ	144.2	81

Հաղթող մասնակիցների ուսումնասիրություն, 2017

Մեր կողմից փորձ է կատարվել ուսումնասիրել թե ինչպիսին է եղել հաղթողների կառուցվածքը: 2017թ. 178 մլրդ դրամը բաշխվել է շուրջ 2300 հաղթողների միջև:

Մասնավորապես, Աղյուսակ 28-ում ներկայացված են 2017թ 10 ամենախոշոր հաղթողները:

Աղյուսակ 28. Խոշորագույն 10 հաղթողները

	Հաղթող մասնակիցը	Գեներացրած պարտավորությունը, մլն դրամ	Հաղթած մրցույթների թիվը, հատ
1	Ֆլեշ ՍՊԸ	7,585	74
2	Էյ Էմ Փի Ջի գրուպ ՍՊԸ	5,987	5
3	Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ	5,669	21
4	Արփա-Սևան ԲԲԸ	5,014	2
5	«Մեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ	3,512	3
6	Էրեբունի բժշկական կենտրոն	3,455	17
7	Արաբկիր Բժշկական Համալիր-ԵԴԱԻ ՍՊԸ	2,941	15
8	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	2,883	3
9	Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	2,115	16
10	ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ ՍՊԸ	1,952	11
	Ընդամենը 10 խոշոր	41,116	167
	Ընդամենը ըստ ARMEPS-ի	178,027	13070
	Մասնաբաժինը	23	1.3

Ինչպես նկատում ենք պատվիրատուները 10 խոշոր հաղթողների նկատմամբ գեներացրել են 41 մլրդ դրամի պարտավորություն, ինչը կազմում է ընդհանուրի 23 տոկոսը:

Քանակային առումով հաղթող մասնակիցները հաղթող են ճանաչվել 167 ընթացակարգերում, ինչը կազմում է ընդհանուրի (13070) 1.3%:

Մեր կողմից հաշվարկվել ու ներկայացվել են խոշորագույն 100 հաղթողները: Պետք է նշել, որ բժշկական ծառայությունների պարագայում բավական բարդ է հասկանալ դրանց շիսկայնությունը, քանի որ դրանք հիմնականում ծառայություն են մատուցում միայն առողջապահության նախարարությանը՝ հատուկ ծրագրերի շրջանակներում: Առավել մանրամասն, տես աղյուսակ 29:

Աղյուսակ 29. Խոշորագույն 100 հաղթողները

	Հաղթող մասնակիցը	Գեներացրած պարտավորությունը, մլրդ դրամ	Հաղթած մրցույթների թիվը, հատ
1	Ֆլեշ ՍՊԸ	7.6	74
2	Էյ Էմ Փի Ջի գրուպ ՍՊԸ	6.0	5
3	Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ	5.7	21

4	Արփա-Սևան ԲԲԸ	5.0	2
5	«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ	3.5	3
6	Էրեբունի բժշկական կենտրոն	3.4	17
7	Արաբկիր Բժշկական Համալիր-ԵԴԱԻ ՍՊԸ	2.9	15
8	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	2.9	3
9	Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	2.1	16
10	ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ ՍՊԸ	1.9	11
11	Սուարդի ԲԸ	1.9	4
12	Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ	1.7	12
13	Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձությա և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ ՓԲԸ	1.7	14
14	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ	1.6	4
15	Թիվ1 Շինվարչություն ԲԲԸ	1.5	4
16	“Ռուսոստրախ-Արմենիա” ԱՓԲԸ	1.5	25
17	Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն ՓԲԸ	1.4	12
18	«ԻՆԳՈԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	1.4	104
19	Շտապրուժօգնություն ՓԲԸ	1.3	1
20	«Նաիրի Ինչուրանս» ԱՍՊԸ	1.3	37
21	Նորք-Մարաշ բժշկական կենտրոն ՓԲԸ	1.2	6
22	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	1.2	5
23	Սիփիէս Օիլ Զորփորեյշն ՍՊԸ	1.2	80
24	«Հայ Փոստ» ՓԲԸ	1.1	87
25	Սիսիանի ԲՈՒԱՏ ՍՊԸ	1.1	10
26	«Ոսմար» ՍՊԸ	1.1	4
27	Վեոյա Ջուր ՓԲԸ	1.1	183
28	Վանաձորի բժշկական կենտրոն	1.0	14
29	Մոսէսոն ՍՊԸ	1.0	20
30	Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ	0.9	6
31	Արպանիվ ՍՊԸ	0.9	35
32	«Ավանգարդ» ՍՊԸ	0.9	2
33	Երևանի տնաշինական կոմբինատ ՓԲԸ	0.8	2
34	Արցախ Կարի Կոչիկի Արտադրական Միավորում ՓԲԸ	0.8	2
35	Չարիչատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ ՓԲԸ	0.8	16
36	«Արվատիկ» ՍՊԸ	0.8	2
37	ԴԱՎԻԹՇԻՆ ՍՊԸ	0.8	9
38	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	0.8	18
39	Տուրեկուլոգի դեմ պայքարի ազգային կենտրոն ՊՈԱԿ	0.8	1
40	Նուբարաշեն հոգեբուժական կենտրոն ՓԲԸ	0.8	2
41	Արհովչին ՍՊԸ	0.8	25
42	ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ ՍՊԸ	0.8	40
43	«Մեդրու ՃՇՇՁ» ՍՊԸ	0.8	4
44	Ճանապարհ ՍՊԸ	0.8	1

45	Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԿ ՓԲԸ	0.8	10
46	Էրիզ ՍՊԸ	0.8	6
47	Սևանի հոգեբուժական հիվանդանոց	0.7	3
48	ԽԱԶՀԱՐ ՍՊԸ	0.7	3
49	ԲԱԶԱԼՏՇԻՆ ԱԿ	0.7	3
50	Հրագդանի ԲԿ ՓԲԸ	0.7	14
51	Վանգաս ՍՊԸ	0.7	8
52	Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն	0.7	3
53	Լեհական արժեթղթերի արտադրամաս բաժնետիրական ընկերություն ՀՄ	0.7	2
54	«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ	0.7	2
55	Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ	0.6	37
56	Շենգավիթ բժշկական կենտրոն ՓԲԸ	0.6	10
57	Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ	0.6	8
58	NAS General Trading LLC	0.6	1
59	Գորիսի բժշկական կենտրոն ՓԲԸ	0.6	20
60	ԼԻԼԻԹ-87 ՍՊԸ	0.6	2
61	Կապանի ԲԿ ՓԲԸ	0.6	20
62	ԿԱՊԱՎՈՐ ՍՊԸ	0.6	5
63	Արտաշատի բժշկական կենտրոն ՓԲԸ	0.6	14
64	Ռ.Հ. անվ. Արմվյանի ԲԿ ՓԲԸ	0.6	12
65	Գազկոմչին ՍՊԸ	0.6	6
66	Բիլլ Սթոուն ՍՊԸ	0.6	4
67	Ինժգարանտ ՍՊԸ	0.5	1
68	Թիվ 19 պոլիկլինիկա ՓԲԸ	0.5	6
69	Ա/Ձ Ա. Ավետիսյան	0.5	1
70	Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ	0.5	5
71	Մասիսի ԲԿ ՓԲԸ	0.5	15
72	Ինտերօրթո ՍՊԸ	0.5	1
73	ԳԴԱԿ ՍՊԸ	0.5	14
74	Երվադա ՍՊԸ	0.5	16
75	Խաչատուրյանի Բիդլինգ Գրուպ ՍՊԸ	0.5	2
76	Էլայգեո ՍՊԸ	0.5	2
77	ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ ԲԲԸ	0.5	18
78	Էյչ Գրուպ ՍՊԸ	0.5	48
79	Էջմիածին բժշկական կենտրոն ՓԲԸ	0.5	9
80	Մարտունու ԲԿ ՊՓԲԸ	0.4	12
81	«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ	0.4	3
82	Սմարթլայն ՍՊԸ	0.4	311
83	Աշտարակի բժշկական կենտրոն ՓԲԸ	0.4	16
84	Սուրբ Գրիգոր Նարեկացի բժշկական կենտրոն ՓԲԸ	0.4	12
85	Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն ՊՓԲԸ	0.4	7
86	«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրագրական կենտրոն» հիմնադրամ	0.4	7
87	Մաստերֆուդ ՍՊԸ	0.4	6

88	ԱՎԱ-2000 ՍՊԸ	0.4	2
89	Վաղարշապատի հիվանդանոց ՊՓԲԸ	0.4	8
90	Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ	0.4	22
91	ԻԶՄԻՐԼՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	0.4	5
92	Նարիմանյան ՍՊԸ	0.4	2
93	Դատարժշկական գիտագործնական կենտրոն	0.4	2
94	CMS Hasche Sigle	0.4	2
95	Սևանի ԲԿ ՓԲԸ	0.4	16
96	Տրանսունիվերսալ ՓԲԸ	0.4	5
97	Բեգլարյան բժշկական կենտրոն ՓԲԸ	0.4	7
98	Փարկինգ Սիթի Սերվիս ՓԲԸ	0.4	1
99	Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ	0.4	12
100	Լարս ՍՊԸ	0.4	4
Ընդամենը 100 խոշոր հաղթողներ		108	1751
Մասնաբաժինը		61	13

Նշված 100 հաղթողները չնայած քանակային առումով հաղթող են ճանաչվել մրցույթների միայն 13 տոկոսում, բայց վերահսկում են պետգնումների 61 տոկոսը: Այսինքն, առկա են կենտրոնացվածության միտումներ: Պետք է նշել, որ ռիսկային ձեռքբերումները հիմնականում բաժին են ընկնում ՊՆ-ին, ոստիկանությանը և Երևանի քաղաքապետարանին:

Պետք է նշել, որ մեր կողմից նույնականացված ռիսկային ընկերությունների ցանկը տրամադրվել է ՊԵԿ-ին՝ հավելյալ ուսումնասիրություններ իրականացնելու համար:

Ռիսկային գնումներ/Կոռուպցիոն ռիսկեր պարունակող ձեռքբերումներ և ընկերություններ

Մեր կողմից կիրառված կարմիր դրոշների մեթոդաբանության հիման վրա առանձնացվել են մի շարք անարդյունավետություն, շահերի հնարավոր բախում պարունակող գործարքներ և վեր են հանվել կոռուպցիոն ռիսկեր պարունակող հաղթողներ, որոնք նպատակարար է ավելի խորքային ուսումնասիրության ենթարկել:

Նմանատիպ ռիսկային գործարքներից է, օրինակ Ինգո-Արմենիա ԱՓԲԸ շուրջ 1.3 մլրդ դրամի պայմանագրերի կնքումը առողջապահության նախարարության հետ: Նման ռիսկային գործարքներից ոմանց մասով ապացուցողական բազայի հետ միասին ներկայացվել են ՉԼՄ-ում, օրինակ Ֆակտոր ԹՎ-ով, տես Հետքի հետ մեր ՀԿ համատեղ աշխատանքի արդյունքները:¹⁹

Ի հավելումն աղյուսակ 29-ում դեղնեցված ընկերությունների կարմիր դրոշների մեթոդաբանության հիման վրա առանձնացվել են մի շարք հավելյալ ռիսկային ընկերություններ (Աղյուսակ 30):

Աղյուսակ 30. Ռիսկային ընկերությունների ցանկ

Արթին Էնթրփրայս ՍՊԸ
Ա/Ձ Համլետ Հովսեփյան
Ջրային կառույցների ՓԲԸ
Էլրոգար ՍՊԸ
Երևանտրանս ՓԲԸ
Ճիրինշին ՍՊԸ
Խաչիար ՍՊԸ
Ճինհայ-ՊՈ ՍՊԸ
Սպառչինարդ ՍՊԸ
Բիդեք ՍՊԸ
Ձևավորում ՓԲԸ
Ճինպլուս ՍՊԸ
Հողի և ունեցվածքի գործառնություններ ՓԲԸ
Կամուրջշին ՓԲԸ
Լոկատոր ՓԲԸ
Մարույթա սար ՍՊԸ
Աննա 80 ՍՊԸ
Աֆալան ՍՊԸ
Ագաթ-777 ՍՊԸ
Սամ Կար Ճին ՍՊԸ
Էյդիվի Մեդիա Էս ՍՊԸ
Լեվ ՍՊԸ
Սմալա ՍՊԸ
Կոտայք Ճին ՍՊԸ
Բեյլիս ՍՊԸ
Լիգո-Ճին ՍՊԸ

¹⁹ http://hetq.am/arm/news/89845/2018-i-hing-amisnerin-qaxaqapetarany-654-mIn-drami-paymanagir-e-kngel-narimanyan-spy-i-het.html#_Wxq2QDQ6alQ.facebook
<http://hetq.am/arm/news/89280/erevani-qaxaqapetarany-paymanagrere-e-kngel-nubarashen-varchakan-shrijani-xekavari-knoj-ynkerutyany-het.html/>
<http://hetq.am/arm/news/89112/tntesageti-kartsiqov-s-sargsyani-hrazharakanic-heto-arvats-petqnumnerum-korupcion-riskerkan.html/>

Գոռտիգ ՍՊԸ
Հայաստան Մարզական հասարակական կազմակերպություն
Սիրիթայն ՍՊԸ
Էդմոն և Էդվարդ ՍՊԸ
Բրիդջ ՍՊԸ
Գազկոմշին ՍՊԸ
Վահրադյան Շին ՍՊԸ
Ռուբիկ և Իշխան ՍՊԸ
Նիկոլ Դուման ԱԿ
Տեր-Հայրապետյան Շին ՍՊԸ
Արաբկիր-Սերվիս ՓԲԸ
Ռադիկ Շին ՍՊԸ
Արհովշին ՍՊԸ
Այ Փի Էս Սի Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ ՍՊԸ
Գործ-555 ՓԲԸ
Արա-Արաքս Գրուպ ՍՊԸ
Շինարար-97 ՍՊԸ
Ա/Զ Լիլիթ Կիրակոսյան

Մասնակցության վերլուծություն

Մեր կողմից փորձ է կատարվել ուսումնասիրել կայացած գնման ընթացակարգերում մասնակցության տեսանկյունից ամենաարդյունավետ մրցույթների 10-յակը: Մասնավորապես 2017թ արդյունքներով այն ուներ հետևյալ պատկերը (տես աղյուսակ 31)

Աղյուսակ 31. 5-ից ավելի մասնակից գրանցած մրցույթների նկարագիրը

Պատվիրատու	Ծածկագիրը	Գնման առարկա	Գնման ընթացակարգ	Մասնակիցների քանակը	ARMEPS-ում առկայությունը
ՊՆ	ՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/2	տանիքների վերանորոգման աշխատանքներ	Բաց ընթացակարգ	39	Առկա է ²⁰
Արմավիրի մարզպետարան	ՀՀ ԱՄ ԲԸԱՇՁԲ-17/01	Շենիկ համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքներ	Բաց ընթացակարգ	29	Առկա է ²¹
Արմավիրի մարզպետարան	ՀՀ ԱՄ ԲԸԱՇՁԲ-17/02	Թաիրով գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ	Բաց ընթացակարգ	27	Առկա է ²²
ԱԺ	ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-17/2	ԱԺ զորանոցի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում	Գնանշման հարցում	27	Առկա է ²³

²⁰ Առկա է միայն մրցույթի մասին հայտարարություն: <https://www.azdarar.am/announcements/cat/69/00233735/>

²¹ Հաղթողը Էլիտ Հիլզ ՍՊԸ-է, որը 2018թ ևս իրականացրել է նույն օբյեկտի վրա շինաշխատանքները:

²² <http://www.irtek.am/views/act.aspx?aid=94845>

²³ Լրացուցիչ համաձայնագիր է կնքվել ու գումարը ավելի քան 2 միլիոնով ավելացվել է: <https://ameps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=e36416c7-3d84-421f-b211-ec28c8b77da3>

Արմավիրի մարզպետարան	ԱՄ ԲԸՀԱՇՁԲ- 17/04	Մուսաբեռ համայնքի մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի վերանորոգման աշխատանքներ	Բանակց. ընթացակարգ հայտարար.	25	Առկա չէ
Տավուշի մարզպետարան	ՏՄ- ԲԸՀՇՁԲ- 17/01	Տավուշի մարզի գ.Ոսկեվանի դպրոցի պատուհանների վերատեղադրման աշխատանքների և դպրոցի պաշտպանիչ հենապատի կառուցման աշխատանքներ	Բաց ընթացակարգ	23	Առկա է ²⁴
ՊՆ	ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲԸՀՇՁԲ- 10/1	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	Բաց ընթացակարգ	22	Առկա չէ ²⁵
ՊՆ	ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲԸՀՇՁԲ- 10/3	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	Բաց ընթացակարգ	21	Առկա չէ ²⁶
Լոռու մարզպետարան	ՀՀԼՄ- ԳՀԱՇՁԲ- 17/06	շենքերի, շինությունների հիմնանորոգում	գնանշման հարցում	20	Առկա է ²⁷
Վայոց ձորի մարզպետարան	ՎՁՄ- ԳՀԱՇՁԲ- 05/17	Շատին համայնքի մանկապարտեզի շենքի վերակառուցման աշխատանքներ	գնանշման հարցում	20	Առկա է ²⁸

Ինչպես տեսնում ենք խոշորագույն 2017թ. 10 ամենամեծ մասնակցություն ապահոված մրցույթներին ընդհանուր առմամբ մասնակցել է 253 մասնակից: Այնուհանդերձ ընդհանուր մասնակցության ցուցանիշը լրջագույն մտահոգություններ է առաջացնում, մասնավորապես 2017թ 5 և ավելի մասնակից ունեցող մրցույթների թիվը կազմել է 582, կամ ընդհանուր ընթացակարգերի 2.3 տոկոսը: Այս 582 ամենամեծ մասնակցություն ապահովող մրցույթների միջին մասնակցությունը կազմել է 6.8:

Աղյուսակ 32. 5-ից ավելի մասնակից ունեցող մրցույթների նկարագիրը

5	6	7	8	9	10	10 ից	Ընդամենը
մաս	մասն	մաս	մաս	մաս	մաս	ավելի	
նակ	ակից	նակ	նակ	նակ	նակ	մասնակ	
ից		ից	ից	ից	ից	ից	

²⁴ <https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=4bfc1e40-51f6-4d4a-950e-01fa7d7cd7c7>

²⁵ <https://www.azdarar.am/docs/79758/>

²⁶ <https://www.azdarar.am/announcements/org/69/00233422/>

²⁷ <https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=7c9d63fa-a514-49f5-b878-927260e36336>

²⁸ <https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=4e86791a-e6eb-43d2-a10c-0f912452b304>

Մրցույթների թիվը, հատ	282	119	54	41	25	13	48	582
Մասնաբաժինը	48.5	20.4	9.3	7	4.3	2.2	8.2	100

Պետք է նշել, որ մասնակցության տեսանկյունից մրցակցային մրցույթներից ամենաշատը իրականացվել են հետևյալ պատվիրատուների կողմից:

Աղյուսակ 33. 5-ից ավելի մասնակից ունեցող մրցույթների քանակական ու որակական բնութագիրը

Պատվիրատու	5 և ավելի մասնակից ունեցող մրցույթների քանակը	Ընդհանուր մասնակիցների թիվը	Միջին մասնակցությունը
Դատական ղեկարտամենտ	117	668	5.7
Պաշտպանության նախարարություն	59	439	7.4
Ոստիկանություն	49	280	5.7
ՊԵԿ	22	121	5.5
Արմավիրի մարզպետարան	21	230	11
Քննչական կոմիտե	21	171	8.1
ԱԱԾ	17	105	6.2
Տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	16	99	6.2
Ֆինանսների նախարարություն	16	96	6
ԱՆ ՔԿՎ	14	88	6.3
Գլխավոր դատախազություն	14	85	6.1
ԱՆ	14	84	6
Գեղարքունիքի մարզպետարան	12	111	9.2
ԱԻՆ	12	79	6.6
ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	11	80	7.3
Աշխ. և սոց. հարցերի նախ.	10	57	5.7
Ծիրակի մարզպետարան	9	90	10
Լոռու մարզպետարան	9	82	9.1
ԱԺ	9	77	8.6
Տավուշի մարզպետարան	8	78	9.8
Վարչապետի աշխատակազմ	8	50	6.3
Նախագահի աշխատակազմ	8	42	5.3
Վայոց ձորի մարզպետարան	7	64	9.1
Արագածոտնի մարզպետարան	7	64	9.1
ՄԻՊ	6	51	8.5
Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	6	45	7.5
ԱՎԿ	6	40	6.7
Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	6	35	5.8
Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	6	35	5.8
Կոտայքի մարզպետարան	5	46	9.2

Արարատի մարզպետարան	5	43	8.6
Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	5	33	6.6
Բնապահպանության նախարարություն	5	28	5.6
Սյունիքի մարզպետարան	4	29	7.3
Հաշվեքննիչ պալատ	4	26	6.5
Մշակույթի նախարարություն	4	26	6.5
ԱԳՆ	4	25	6.3
ՀԾԿՀ	4	24	6
Առողջ. Նախ.	4	24	6
Վյուդ. նախ	4	24	6
Հատուկ քննչական ծառայություն	4	23	5.8
Սփյուռքի նախարարություն	3	17	5.7
Քաղաքացիական ծառայության խորհուրդ	2	14	7
ԿԳՆ	2	12	6
ՍԳ	1	10	10
Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	1	6	6
ՊՊԾ	1	6	6
Ընդամենը	582	3962	6.8

Ինչպես տեսնում ենք, միջին մասնակցության մասով առկա են լրջագույն մտահոգություններ: Պետք է նշել, որ սա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ ARMEPS համակարգը ևս գրավիչ չէ բիզնես սուբյեկտների համար: Օրինակ՝ նույն էլեկտրոնային անուրդներում անգլերեն լեզվով մրցույթների շարքում առկա են մրցույթներ որոնց անհնար է դիմել առանց հայերենի իմացության:

Պետզնումների համակարգում օտարերկրյա ընտրված մասնակիցների ուսումնասիրություն, 2017թ

Աղյուսակ 34. Հաղթող ֆիրմաների կառուցվածքում օտարերկրյա մասնակցությամբ ֆիրմաների բնութագիրը

Հիմնական պատվիրատուն	Գնման առարկա	Պայմանագրի ընդհանուր գումարը, մլն դրամ	Պայմանագրերի թիվը, հատ	Գրանցման տվյալներ/պայմանագրի հղում	
CMS Hasche Sigle	Արդարադատության նախարարություն	Իրավական խորհրդակցական ծառայություններ	369	2	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=bd90f980-d73b-4b4f-86b9-f40ab4e52397
Արժեթղթերի լեհական արտադրամաս ԲԸ	Տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	Ստուգող սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	17	2	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=31cc8eb5-d182-4d1c-8f5f-29fa0426b1c3
Լեհական արժեթղթերի արտադրամաս բաժնետիրական ընկերություն ՀՄ ²⁹	Ոստիկանություն	կենսապահական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման աշխատանքներ	689	2	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=527fb32b-c499-4fa3-9ac5-04f67d464e71
Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն	Գյուղատնտեսության նախարարություն	Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր	693	3	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=b96f2ea9-c242-4791-9412-a5e952a07432
WaterLex (Վոթեքս)	Մարդու իրավունքների պաշտպան	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	1	1	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=29b07fc4-0524-4e9f-980b-48778fdbc30a
Polska Wytwornia Papierow Wartosciowych S.A.	Տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	Թվային տախտկագրաֆի համակարգի պահպանման և թվային տախտկագրաֆի քարտերի պատրաստման ծառայություններ ի մատուցում	86	1	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=ca9cdddc-95ab-4049-9695-79135e858dcd
«Գրաբնեռ Ինտրունետ և Մետեխնիկ» ՍՊԸ	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	չափող սարքերի վերանորոգման պահպանման ծառայություններ -irox 2000	0.9	1	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=1ef8ad64-539f-443b-89bc-b8758e142f9b
Microsoft Store Middle East and Africa Inline Store	«Միջուկային և ռադիոգիտական անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ	Ծրագրային ապահովում	0.3	2	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=af5f2c82-c173-47eb-8cc7-642cf5848524
ԱՄՆ քաղաքացի Շեյլա Ռան Պապայան	պետական գույքի կառավարման վարչություն	հողերի գնման ծառայություններ	97	1	https://armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=ab957a49-f543-402b-a15b-cc57597526c4

²⁹ Ֆորմալ լեհական կազմակերպությունը այստեղ մասնաճյուղ է բացել

Ընդամենը 2017	1953	15	
---------------	------	----	--

Ինչպես տեսնում ենք պետությունների համակարգում պայմանագրային պարտավորությունների շուրջ 99 տոկոսը բաժին է ընկնում հայրենական ընկերություններին: Միաժամանակ մասնակցության և ընտրված պայմանագրերի միայն 0.1 տոկոսն է բաժին ընկնում ոչ հայրենական ընկերություններին:

Պետզնումների համակարգում հաղթողները և դրանց ուսումնասիրությունը ըստ չափերի, 2017թ

Ընդհանուր առմամբ շուրջ 180 մլրդ դրամի պայմանագրերը բաշխվել են շուրջ 2300 հաղթողների միջև: Հավելված 3-ում փորձել ենք դրանք դասակարգել ըստ կառուցվածքի:

Ընդհանուր առմամբ պետական գնումներում հաղթող ճանաչված ընկերությունների կողմից, ՉԱՀ-ում ներկայացված տվյալների համաձայն, հայտարարագրվել են շուրջ 120000 աշխատողներ:

Հիմնախնդիր 1: Պետք է նշել, որ ՓՄՁ սուբյեկտների կողմից պետական գնումների մասնակցության մասով որևէ տվյալ չի գեներացվում, ավելին 2017թ վիճակագրությունը առկա չէ նախարարության կայքում:

Գծանկար 4

Ըստ կազմակերպության չափերի պետական գնումների համակարգում մասնակցության պատկերը

Պետք է նշել, որ կազմակերպությունների դասակարգման համար կիրառվել են միայն հայտարարագրված աշխատողների մասով տվյալները: Այս մասով հիմք են հանդիսացել ՉԱԿ-ի

տվյալները:³⁰ **Ըստ այդմ 2017թ ընթացքում պետգնումների համակարգում շուրջ 2300 ընտրված մասնակիցների 4 տոկոսը խոշոր կազմակերպություններ են:**

2017թ. խոշոր ընկերությունները կազմում են պետգնումներում հաղթող ճանաչվածների շուրջ 4 տոկոսը: Քանակային առումով նրանց է բաժին ընկնում պայմանագրերի 8 տոկոսը:

Ըստ գնումների հաշվետվողականության համակարգում առկա տվյալների ուսումնասիրության պետգնումների համակարգի միջոցով 2017թ կնքվել է շուրջ 13100 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 180 մլրդ դրամի պարտավորություն:

Պետք է նշել, որ նշված 13100 պայմանագրերի շուրջ 8 տոկոսը բաժին է ընկնում խոշոր կազմակերպություններին:

Այս 4 տոկոս խոշոր կազմակերպությունների մասնաբաժինը ընդհանուր կնքված պայմանագրերի մասնաբաժնում կազմում է շուրջ 48 մլրդ դրամ, կամ ընդհանուրի 2017թ կնքված պայմանագրային պարտավորությունների շուրջ 27 տոկոսը:

2017թ. խոշոր ընկերություններին էր բաժին ընկնում պետգնումներով գեներացված պարտավորությունների շուրջ 27 տոկոսը:

Մյուս ուղղությունը դա հաղթող ընկերությունների կողմից հայտարարագրված աշխատողների ուսումնասիրությունն է: Պետք է նշել, որ խոշոր կազմակերպությունների կողմից հայտարարագրված աշխատողները շուրջ 70 հազար են կամ կազմում են ընդհանուրի շուրջ 58 տոկոսը:

2017թ. պետգնումներում ընտրված խոշոր ընկերություններին է բաժին ընկնում հայտարարագրված աշխատողների 58 տոկոսը:

³⁰ Հասկանալի է, որ

ՓՄՁ սուբյեկտների մեկ աշխատողն պետգնումներում երկու անգամ ավելի շատ պայմանագրային պարտավորություն է գեներացնում, քան խոշոր ընկերության աշխատողը: Իհարկե սա մասամբ պայմանավորված է նաև հանրային կազմակերպություններում աշխատողների մեծ մասնաբաժնով:

Հիմնախնդիր: Պետք է նշել, որ գնումների տարեկան հաշվետվությունը ևս չի անդրադառնում ՓՄՁ մասնակցության հարցերին:

Բողոքարկման համակարգի մոնիտորինգային հաշվետվություն

Բողոքարկման համակարգում օրենսդրական կարգավորումների/զարգացումների մոնիտորինգ

Պետական գնումների բողոքարկման իրավահարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ՝ «Գնումների գործընթացի բողոքարկումը» բաժնում գետեղված իրավանորմերով, ՀՀ բողոքարկման խորհրդի կողմից 21.04.2017թ. N1 որոշմամբ հաստատված «Բողոքարկման խորհրդը գործունեության» Կարգի դրույթներով և գնումների վերաբերյալ այլ իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքները քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները: Հայաստանի Հանրապետության Պետական գնումների Բողոքարկման խորհուրդը բաղկացած պետք է լիներ մինչև երեք անդամից: Այնուհանդերձ փաստացիորեն Բողոքարկման խորհրդի գործունեությունն իրականացվում էր միայն 2 անդամով, որի պատճառով 2018թ. մայիսի 17-ի N 567-Ն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվեց, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց թիվը պետք է **լինի երկու անդամ**:

Պետք է նշել, որ առկա են բողոքներ քննող անձի չափանիշներ, մասնավորապես գնումների հետ կապված բողոքներ քննող անձ կարող է նշանակվել ՀՀ այն քաղաքացին, որն ունի տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենտ) կամ իրավագիտություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և տիրապետում է հայերենին:³¹

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը պաշտոնավարում է հինգ տարի ժամկետով, ի լրումն գնումների հետ կապված բողոքներ քննող անձի լիազորությունների իրականացման առավելագույն տարիքը 65-ն է:³²

Բողոքը քննելիս խորհրդի անդամը հանդես է գալիս որպես գնումների բողոքարկման խորհուրդ: Բողոքը քննվում է խորհրդի անդամի կողմից միանձնյա: Բողոքարկման խորհրդի անդամները վարույթի ընթացքում կոչվում են՝ բողոքները քննող անձ: Բողոքարկման խորհուրդը իր գործունեությունն իրականացնում է երկու ընթացակարգով.

1) Բողոքարկման ընթացակարգ, որի դեպքում քննվում են գնումների ընթացքում պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ տարբեր շահագրգիռ անձանց կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքները:

2) Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, որի դեպքում քննվում են ՀՀ Ֆինանսների նախարարության համապատասխան գրությամբ ներկայացված պահանջները:

Իրավական համապատասխանության գնահատական տալու նպատակով մոնիթորինգի է ենթարկվել Բողոքարկման խորհրդի՝ բողոքարկման ընթացակարգի և գնումների գործընթացին

³¹ 2018թ. Մարտի 23-ի ՅՕ-259-Ն որոշմամբ:

³² Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի աշխատակազմ՝ մեկական խորհրդակալի ու օգնականի հաստիքով: Վարույթ ընդունված յուրաքանչյուր բողոք քննելու համար Խորհրդի անդամի հրամանով խորհրդակալը կամ օգնականը նշանակվում է նիստերի քարտուղար:

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի 100-ական որոշումներ:

Բողոքարկման ընթացակարգի 100 և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի 100 որոշումների մոնիթորինգի ընթացքում, համապատասխանաբար 7 և 5 որոշումներում ենթադրվում է կոռուպցիոն ռիսկերի առկայություն, որոնց հիմնավորումները ներկայացված են թիվ 1 և թիվ 2 հավելվածներում:

Այնուամենայնիվ, ինչպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, այնպես էլ պետական գնումների համակարգի կատարելագործման ու արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է գնումների վերաբերյալ օրենսդրության որշակի փոփոխություններ:

Մասնավորապես, օրենսդրական փոփոխության արդյունքում պետք է՝

ա) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի նիստերին, որպես կողմ պետք է մասնակցի լիազորված անձի ներկայացուցիչը, ով կներկայացնի ապացույցներ և կհիմնավորի տվյալ ընկերության կողմից թույլ տրված խախտումը, կբողոքարկի Բողոքարկման խորհրդի որոշումները: Գործող օրենսդրությամբ այդ գործառույթը (մասնակի), դրված է Պատվիրատուի վրա: Սակայն վերջինիս իրավասությունները (շահագրգռվածության առումով) ավարտվում են հայտը մերժելով և հիմքերը լիազորված մարմնին ուղարկելով: Իսկ դրանից հետո, թե ինչ կլինի, տվյալ անձը կներառվի ցուցակում թե՛ չի ներառվի, Պատվիրատուին չի հետաքրքրում:

բ) եթե Բողոքարկման խորհրդում նույն ընկերության (անձի) վերաբերյալ քննվում է և բողոքարկման ընթացակարգի և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի գործեր, կարծում ենք արդյունավետ և արագ քննություն իրականացնելու համար, ճիշտ կլինի երկու ընթացակարգերը միացնել մեկ վարույթում և մեկ որոշմամբ որոշել դրանց հարցը:

գ) պարտավորեցնել Բողոքարկման խորհրդին գործի քննությանը անհրաժեշտության դեպքում մասնակից դարձնել կամ պարտադիր հարցում ուղարկել էլեկտրոնային գնումների անցկացման Համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը, Պետ եկամուտների կոմիտեին, Պետական վերահսկողության ծառայությանը հատուկ գիտելիքներ պահանջող այլ իրավասու կազմակերպությունների:

Կցվում է նաև բողոքարկման և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգով 2017թ. նոյեմբեր-2018թ. հոկտեմբեր ժամանակաընթացքում Բողոքարկման խորհրդի կողմից քննված և կայացված որոշումների 100-ական ցանկերը (տես՝ 1.1. և 2.1. հավելվածները):

Պետք է նշել, որ բողոքարկման համակարգում նաև մեր կողմից բարձրաձայնված ռիսկերի կանխարգելման նպատակով Ֆինանսների նախարարի կողմից դեկտեմբերի 6-ին ստորագրվել է 600-Ն հրամանը, որը ուժի մեջ է 2018թ դեկտեմբերի 18-ից:³³

2017 թվականի միտումների ուսումնասիրություն
Բողոքարկման խորհրդի կողմից «Սև ցուցակում» ներառելու որոշումների մոնիթորինգ

33

http://gnumner.am/website/images/original/%D5%80%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80_600_%D5%86.pdf?fbclid=IwAR1ZZKbtCO6NHvT_7ibQxmeQ4E57U44fLeqBE5olofkijMSnrf1hU9Ff3N8

2017թ ապրիլի 25-ից 2018թ հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում բողոքարկման խորհրդում քննության է ենթարկվել մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու 178 ընթացակարգ³⁴:

Պետք է նշել, որ եթե նախկինում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու մասով չկար միասնական մոտեցում (նվազագույնը 6 ամսից մինչև 3 տարի), ապա ներկայումս պայմանավորված նաև ԵԱՏՄ գնումների օրենսդրության ներդաշնակեցմամբ սահմանվել է 2 տարվա միասնական ժամկետ:

Աղյուսակ 35. Մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգերի ազդեցացված վերլուծություն 2017թ

	Մերժվել է ցուցակում ներառումը	Բավարարվել է ցուցակում ներառումը	Առանց քննության	Ընդամենը
	143	34	1	178
Մասնաբաժինը, %	80	19	1	

ԲԽ անդամ Միեր Անանյանի կայացրած որոշումների մոնիտորինգ մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով

2017թ ապրիլի 25-ից մինչև 2018թ հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում ԲԽ անդամ Միեր Անանյանի կողմից մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով ընդունվել է 95 որոշում, որից 75-ի մասով կայացվել են մերժման որոշումներ, 19-ի մասով բավարարվել են, իսկ 1 ընթացակարգ թողնվել է առանց քննության:

Աղյուսակ 36

	Մերժվել է ցուցակում ներառումը	Բավարարվել է ցուցակում ներառումը	Առանց քննության	Ընդամենը
	75	19 ³⁵	1	95
Մասնաբաժինը, %	79	20	1	100

ԲԽ անդամ Էմիլ Սարգսյանի կայացրած որոշումների մոնիտորինգ մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով

³⁴ Առանց պետական գաղտնիք պարունակող գնումների մասով բողոքների:

³⁵ 33 գնումների բողոքարկման խորհրդի որոշմամբ 17 մասնակից ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով, 1 մասնակից՝ 6 ամիս ժամկետով և 1 մասնակից՝ 3 տարի ժամկետով:

///

2017թ ապրիլի 25-ից մինչև 2018թ հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում ԲԽ անդամ Էմիլ Սարգսյանի կողմից մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով ընդունվել է 83 որոշում, որից 68-ի մասով կայացվել են մերժման որոշումներ, 15-ի մասով բավարարվել են:

Աղյուսակ 37

	Մերժվել է ցուցակում ներառումը	Բավարարվել է ցուցակում ներառումը	Առանց քննության	Ընդամենը
	68	15 ³⁶	0	83
Մասնաբաժինը, %	82	18	0	100

Ամփոփում: Ինչպես տեսնում ենք ԲԽ երկու անդամների կողմից ընդունված որոշումների մասով առկա են նույնական միտումներ: Ընդհանուր առմամբ 26 մասնակից է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքարկման խորհրդի որոշումների մոնիտորինգ

2017թ ապրիլի 25-ից 2018թ հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում բողոքարկման խորհրդում քննության է ենթարկվել մասնակիցների կողմից ներկայացված 109 բողոք³⁷, որի արդյունքում բավարարվել է 62-ը (57%):

Աղյուսակ 38. Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքարկումների դիսամիկայի ազդեցացված վերլուծություն 2017թ

	Բավ. է (նաև մասնակի)	Մերժվել է	Առանց քննության	Ընդամենը
	62	33	14	109
Մասնաբաժինը, %	57	30	13	100

ԲԽ անդամ Մհեր Անանյանի կողմից պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների և դրանց արդյունքում կայացրած որոշումների մոնիտորինգ

Աղյուսակ 39. ԲԽ կողմից ուսումնասիրված Բողոքների դիսամիկայի ուսումնասիրություն (առանց սև ցուցակ)

	Բավ	մերժել	Առանց քննության	Ընդամենը
	33	14	6	53
Մասնաբաժինը, %	62	27	11	100

³⁶ 33 գնումների բողոքարկման խորհրդի որոշմամբ 9 մասնակից ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով, 2 մասնակից՝ 6 ամիս ժամկետով:

³⁷ Առանց պետական գաղտնիք պարունակող գնումների մասով բողոքների:

ՔԽ անդամ Էմիլ Սարգսյանի կողմից պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների և դրանց արդյունքում կայացրած որոշումների մոնիտորինգ

Աղյուսակ 40. ՔԽ կողմից ուսումնասիրված Բողոքների դիմամիկայի ուսումնասիրություն (առանց սև ցուցակ)

	Բավ	մերժել	Առանց քննության	Ընդամենը
	29	19	8	56
Մասնաբաժինը	52	34	14	100

Պետք է նշել, որ 109 բողոքները բաշխվել են 50 պատվիրատուների վրա: Ամենաշատը բողոքարկվել են ՊՆ կայացրած որոշումները 26 կամ ընդհանուրի 24%: Հաճախակիության տեսանկյունից հաջորդում է քաղաքաշինության պետական կոմիտե, որի գործողություններում գրեթե մշտապես խախտվել են մասնակիցների շահերը:

Աղյուսակ 41. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել

	Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են	Բավ.	Մերժ.	Առանց քննության	Ընդամենը
1	ՊՆ	11	13	2	26
2	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե	5		1	6
3	Արագածոտնի մարզպետարան	3	2	1	6
4	ՀՀ տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն	2	1	2	5
5	Երևանի քաղաքապետարան	3	1	1	5
6	ՀԱԷԿ ՓԲԸ	1	2	1	4
7	Արարատի մարզպետարան	2		1	3
8	Վանաձորի համայնքապետարան	2	1		3
9	«Երևանի հ.181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	2	1		3
	Ընդամենը նշվածը	31	21	9	61
	Մասնաբաժինը ընդհանուրում, %	50	64	64	56

Ինչպես տեսնում ենք 9 ամենահաճախ բողոքարկված պատվիրատուներին է բաժին ընկնում ընդհանուր բողոքների 56 տոկոսը:

2017-2018 թթ. միտումների ուսումնասիրություն
Բողոքարկման խորհրդի կողմից «Սև ցուցակում» ներառելու որոշումների մոնիտորինգ

2017թ. Նոյեմբերի 1-ից մինչև 2018թ. Նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում բողոքարկման խորհուրդը կայացրել է 456 որոշում, որից 273-ը (կամ 60%) վերաբերվում է «սև ցուցակում» ներառելու հետ կապված հարցերին:

2017թ. Նոյեմբերի 1-ից մինչև 2018թ. Նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում բողոքարկման խորհուրդը մասնակիցներին սև ցուցակում ներառելու մասով բողոքների քննության հիման վրա կայացրել է 273 որոշում, ինչն աննախադեպ բարձր ցուցանիշ է:

Աղյուսակ 42. Մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգերի միտումների ազդեցական վերլուծություն 2017թ

	Մերժվել է ցուցակում ներառումը	Բավարարվել է ցուցակում ներառումը	Առանց քննության	Ընդամենը
	154	119	1	274
Որից Միեր Անանյանի կողմից	76	65		141
Որից Էմիլ Սարգսյանի կողմից	78	54	1	133
Մասնաբաժինը, %	56	43	1	100

ԲԽ անդամ Միեր Անանյանի կայացրած որոշումների մոնիտորինգ մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով

2017թ Նոյեմբերի 1-ից մինչև 2018թ. Նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում ԲԽ անդամ Միեր Անանյանի կողմից մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով ընդունվել է 141 որոշում, որից 76-ի մասով կայացվել են մերժման որոշումներ, իսկ 65-ի մասով բավարարվել են:

Աղյուսակ 43

	Մերժվել է ցուցակում ներառումը	Բավարարվել է ցուցակում ներառումը	Առանց քննության	Ընդամենը
	76	65		141
Մասնաբաժինը, %	54	46		100

ԲԽ անդամ Էմիլ Սարգսյանի կայացրած որոշումների մոնիտորինգ մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով

2017թ Նոյեմբերի 1-ից մինչև 2018թ. Նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում ԲԽ անդամ Էմիլ Սարգսյանի կողմից մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով ընդունվել է 133 որոշում, որից 78-ի մասով կայացվել են մերժման որոշումներ, իսկ 54-ի մասով բավարարվել են:

Աղյուսակ 44

	Մերժվել է ցուցակում ներառումը	Բավարարվել է ցուցակում ներառումը	Առանց քննության	Ընդամենը
	78	54	1	133
Մասնաբաժինը, %	59	41	0	100

Ամփոփում: Ինչպես տեսնում ենք ԲԽ երկու անդամների կողմից ընդունված որոշումների մասով առկա են նույնական միտումներ: Ընդհանուր առմամբ դիտարկվող ժամանակաշրջանում շուրջ 120 մասնակից է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքարկման խորհրդի որոշումների մոնիտորինգ

2017թ Նոյեմբերի 1-ից մինչև 2018թ. Նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում բողոքարկման խորհրդում քննության է ենթարկվել մասնակիցների կողմից ներկայացված 109 բողոք³⁸, որի արդյունքում բավարարվել է 62-ը (57%):

Աղյուսակ 45. Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքարկումների դիսամիկայի ազդեցացված վերլուծություն 2017թ

	Բավ է (նաև մասնակի)	Մերժվել է	Առանց քննության	Ընդամենը
	62	33	14	109
Որից Միեր Անանյանի կողմից	33	14	6	53
Որից Էմիլ Սարգսյանի կողմից	29	19	8	56
Մասնաբաժինը, %	57	30	13	100

ԲԽ անդամ Միեր Անանյանի կողմից պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների և դրանց արդյունքում կայացրած որոշումների մոնիտորինգ

Աղյուսակ 46. ԲԽ կողմից ուսումնասիրված Բողոքների դիսամիկայի ուսումնասիրություն (առանց սև ցուցակ)

	Բավ	մերժել	Առանց քննության	Ընդամենը
	33	14	6	53
Մասնաբաժինը, %	62	27	11	100

ԲԽ անդամ Էմիլ Սարգսյանի կողմից պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների և դրանց արդյունքում կայացրած որոշումների մոնիտորինգ

Աղյուսակ 47. ԲԽ կողմից ուսումնասիրված Բողոքների դիսամիկայի ուսումնասիրություն (առանց սև ցուցակ)

	Բավ	մերժել	Առանց քննության	Ընդամենը
	29	19	8	56
Մասնաբաժինը	52	34	14	100

Պետք է նշել, որ 109 բողոքները բաշխվել են 50 պատվիրատուների վրա:

³⁸ Առանց պետական գաղտնիք պարունակող գնումների մասով բողոքների:

Ամփոփում: Ինչպես տեսնում ենք ԲԽ երկու անդամների կողմից ընդունված որոշումների մասով առկա են նույնական միտումներ: Բողոքների ավելի քան 50 տոկոսը բավարարվել է:

Պետք է նշել, որ բողոքարկման համակարգում արդարության և արդյունավետության յուրահատուկ ինդիկատոր է բողոքարկման խորհրդի կողմից ընդունված այն որոշումների մասնաբաժինը, որոնք բողոքարկվել են դատարանում: Այս մասով չնայած առկա է դատարան բողոքների թվի աճ, սակայն հարաբերական առումով այն նվազում է:

Աղյուսակ 48

	2016	2017	2018
Դատարանում բողոքարկված որոշումների թիվը	5	22	32
Դատարանում բողոքարկված որոշումների մասնաբաժինը, %		8	7

Հավելված 1-ում և 2-ում մեր կողմից առանձնացվել են ռիսկային բողոքները երբ նույնական բողոքների մասով առկա են ոչ նույնական որոշումներ, ինչն որոշակի ազդակ է կոռուպցիոն ռիսկերի հնարավոր առկայության մասին:

Հավելված 1. Բողոքարկման ընթացակարգով 2017թ. նոյեմբեր-2018թ. հոկտեմբեր ժամանակահատվածում բողոքարկման խորհրդի կողմից քննված և կայացված որոշումների մոնիթորինգ

Հ/հ	Բողոքը	Բողոքի հիմնական բովանդակությունը և բողոքարկման հիմքը	Բողոքարկման խորհրդի որոշումը	Համանման բողոքների քննության վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում նկատված փաստական հանգամանքներ, որոնք կարող են պարունակել կոռուպցիոն ռիսկեր	Կայացված որոշման օրը, համարը և որոշում կայացնողը

1	ԳԲԽ ԱՄ-2018/81	<p>«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ 17.08.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ «Հայկական Ատոմային Էլեկտրոկայան» ՓԲԸ (այսուհետև՝ Պատվիրատու), կողմից 14.05.2018թ. հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊԶԲ-4/18» պաշտպանիչ միջոցների ձեռքբերման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 13-րդ չափաբաժնին հայտ են ներկայացրել «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ «ՏԵՔՍՈՒԲԼԴ» ՍՊԸ: Ս/թ օգոստոսի 10-ին թիվ 3.4 որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ՏԵՔՍՈՒԲԼԴ» ՍՊԸ ճանչել է թիվ 13-րդ չափաբաժնի մատով ընտրված մասնակից, որը հավասար է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-2-րդ կետերին, 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետին, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետին, 65-րդ կետին: Այսինքն Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, որը հիմնավորվում է նախորդ երեք տարվա ընթացքում պատշաճ իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:</p>	<p>Բողոքը քննող անձը արձանագրելով, որ իրոք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.18թ. թիվ 3.4 որոշմը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-2-րդ կետերին, 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետին, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետին, 65-րդ կետին, այնուամենայնիվ որոշել է՝ բողոքը մերժել, քանի որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից բողոքը կարող էր ներկայացվել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ բողոքը ներկայացվել է հայտերը բացելուց և «ՏԵՔՍՈՒԲԼԴ» ՍՊԸ ընտրված մասնակից ճանաչելուց հետո:</p>	<p>Բողոքարկման խորհրդի որոշումից ակնհայտ է դառնում, որ «Հայկական Ատոմային Էլեկտրոկայան» ՓԲԸ կողմից «ՀԱԷԿ-ԲՄԱՊԶԲ-4/18» ծածկագրով անցկացված մրցույթի ընթացքում, էստ էության խախտվել են «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ իրավորենքները, սակայն վերջինիս բողոքը մերժվել է, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից բողոքը կարող էր ներկայացվել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Կարծում ենք, իրավական այդ նորմը պետք է փոփոխվի և ընթացակարգի ցանկացած փուլում շահագրգիռ կողմին հնարավորություն տրվի վերականգնել իր խախտված իրավունքները:</p>	ԳԲԽ-ԱՄ-20/8/81 Մհեր Անանյան
2	ԳԲԽ ԱՄ-2017/42	<p>«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ 06.11.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ «Երևանի հ.181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ (այսուհետև՝ Պատվիրատու), կողմից կազմակերպված «181 ԴՊ ԳՀՊԶԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով (այսուհետև՝ Ընթացակարգ) հայտարարված մրցութով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իր որոշումներով «Իայսիտելեկոմ» ՍՊԸ ճանաչել է ընտրված մասնակից և առաջարկել է կնքել գնման պայմանագիր: Բողոք ներկայացնողը գտնում է, որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված և սահմանված կարգով շտկված և գնահատող հանձնաժողովին կրկին ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված մի շարք պարամետրերին և պահանջներին, հետևաբար, պետք է անվավեր ճանաչել գնահատող հանձնաժողովի կայացրած՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:</p> <p>Բողոքի վերաբերյալ Պատվիրատուն գրավոր Խորհուրդին ներկայացրել է իր հիմնավորումները, ըստ որի Հանձնաժողովը տեխնիկական բնութագրերի համապատասխանության ուսումնասիրություններն իրականացրել է կայքերում առկա տեղեկատվության հիման վրա և պարզել՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված և սահմանված կարգով շտկված և գնահատող հանձնաժողովին կրկին ներկայացված տեխնիկական բնութագիրը</p>	<p>Բողոքարկման խորհուրդը արձանագրելով, որ իրոք 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչված «Իայսիտելեկոմ» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված և սահմանված կարգով շտկված և գնահատող հանձնաժողովին կրկին ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված մի շարք պարամետրերին և պահանջներին, հետևաբար, բողոքը պետք է բավարարել և դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:</p>	<p>ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ընդհանուր ժողովի 21.04.2017թ. N 1 որոշմամբ հաստատված՝ «ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի գործունեության» Կարգի 37-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով, Խորհուրդը կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է հրավիրել փորձագետներ (մասնագետներ): Գտնում ենք, որ Խորհուրդը սույն գործով պետք է հրավիրեր համապատասխան փորձագետ (մասնագետ), քանի որ ճիշտ և օբյեկտիվ որոշում կայացնելու համար անհրաժեշտ էր օգտվել հատուկ գիտելիքներ ունեցող փորձագետի ծառայություններից:</p>	17.11.2017 ԳԲԽ-ԱՄ-2017/42 Մհեր Անանյան

		<p>համապատասխանում են իրենց ներկայացրած պահանջներին: Հանձնաժողովի գործողությունները չեն հանգեցրել որևէ մասնակցի իրավունքների խախտման, չեն եղել խտրական և չեն սահմանափակել մրցակցությունը, հետևաբար որոշումները ընդունվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:</p>			
3	ԳԲԽ ԱՄ-2017/53	<p>«Ֆոտոն» ՍՊԸ 28.12.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ «Նուբարաշեն մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ (այսուհետև՝ Պատվիրատու), կողմից կազմակերպված «ՆՄՄԴ-ԳՀԱՊԶԲ-(15/2-18/1)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով (այսուհետև՝ Ընթացակարգ) հայտարարված մրցույթով ընթացակարգը գնահատող հանձնաժողովը իր որոշումներով «Գալիմա» ՍՊԸ և Արտաշես Հովհաննիսյան ԱԶ-ին ճանաչել է ընտրված մասնակիցներ և առաջարկել է կնքել գնման պայմանագիր: Բողոք ներկայացնողը գտնում է որ, ընթացակարգը գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր «Գալիմա» ՍՊԸ-ի և Արտաշես Հովհաննիսյան ԱԶ-ի հայտերը, քանի որ մասնակցության հայտերի ապահովման վճարման պահանջագրով հայտի ապահովման գումարի չափը գերազանցում են հրավերով պահանջվող գնային առաջարկի 5 տոկոսը: Ընկերությունը խնդրում է՝ չեղյալ համարել ընթացակարգը գնահատող հանձնաժողովի որոշումները և «Գալիմա» ՍՊԸ-ի և Արտաշես Հովհաննիսյան ԱԶ-ի հայտերը մերժել:</p>	<p>Բողոքարկման խորհուրդը արձանագրում է, որ ընտրված մասնակիցներ՝ «Գալիմա» ՍՊԸ-ի և Արտաշես Հովհաննիսյան ԱԶ-ի հայտերի ապահովման չափը գերազանցում է վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկի 5 տոկոսը և համապատասխանաբար կազմում է՝ 700.000 դրամ, 619.600 դրամի փոխարեն և 150.000 դրամ 148, 075 դրամի փոխարեն: Եվ քանի որ «Գնումների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը պետք է հավասար լինի հայտով առաջարկվող գնի մինչև 5 տոկոսին, հետևաբար հայտերի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Հաշվի առնելով վերոնշյալ Բողոքարկման խորհուրդը որոշել է՝ բողոքը բավարարել, պարտավորեցնել ընթացակարգը գնահատող հանձնաժողովին՝ «Գալիմա» ՍՊԸ-ի և Արտաշես Հովհաննիսյան ԱԶ-ի հայտերը մերժել և դադարեցնել վերջիններիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:</p>	<p>Բողոքարկման խորհուրդը բավարարելով բողոքը, չնայած գործել է իրավական ակտի («Գնումների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի) տառին համապատասխան, սակայն ըստ Էության դրանով խելաշարժվել է պարտավորությունների կատարման ապահովման ինիստիտուտի բովանդակության հասկացությունը, քանի որ հայտերի ապահովման նպատակը հանդիսանում է ընտրված մասնակիցներ կողմից պարտավորությունների լրիվ ու պատշաճ կատարման ապահովումը: Մասնակիցների կողմից ներկայացվող հայտի ապահովման չափի 5 տոկոսը գերազանցելը ըստ Էության չի սահմանափակել մյուս մասնակիցների, այդ թվում բողոք ներկայացնող՝ «Ֆոտոն» ՍՊԸ իրավունքներն ու շահերը: Ընդհակառակը, իրավական ակտի անկատարությունը պատճառ է դարձել որպեսզի Բողոքարկման խորհուրդի կայացրած որոշումով խախտվեն «Գալիմա» ՍՊԸ-ի և Արտաշես Հովհաննիսյան ԱԶ-ի իրավունքները, քանի որ վերջիններս գրկվել են գնման պայմանագիր կնքելու հնարավորությունից:</p>	16.01.2018թ. ԳԲԽ ԱՄ-2017/53 Մեկը Անանյան
4	ԳԲԽ ԱՄ-2-018/79	<p>«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ 06.08.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), կողմից կազմակերպված «ՀՀՊՆՏՏԱԴ-ԳՀԱՊԶԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով (այսուհետև՝ Ընթացակարգ) հայտարարված մրցույթով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իր որոշումներով «Տիգման Գրուպ» ՍՊԸ ճանաչել է ընտրված մասնակից, անգործության ժամկետ է սահմանել 5 օրացուցային օր և վերջինիս առաջարկել է կնքել գնման պայմանագիր: Բողոք ներկայացնողը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է</p>	<p>Բողոքը քննող անձը արձանագրելով, որ իրոք ընթացակարգի հանձնաժողովի՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ անգործության ժամկետ 10 օրացուցային օրվա փոխարեն սահմանվել է 5 օրացուցային օր, այնուամենայնիվ գտել է, որ «...սույն հարցն ուղակիորեն կապված չէ բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի առարկայի և պահանջի հետ, ուստի սույն հարցը չի կարող դիտարկվել որպես էական սույն բողոքի շրջանակներում:</p>	<p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առավելագույն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն 5 օրացուցային օր է»: Բողոքը քննող անձի կողմից մատնանշված իրավական նորմի հստակ պահանջը ենթարկվել է կամայական մեկնաբանության, և</p>	ԳԲԽ-ԱՄ-2018/79 Մեկը Անանյան

		<p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, քանի որ համաձայն դրա՝ մրցույթի և էլ. աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է, մինչդեռ հանձնաժողովը սահմանել է 5 օրացուցային օր, հետևաբար «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու ընթացակարգի հանձնաժողովի որոշումները պետք է ճանաչվեն անվավեր:</p>	<p>Գրա հետ մեկտեղ խախտման փաստը հնարավոր չէ արձանագրել նաև այն առումով, որ սույն բողոքը ներկայացվել է 06.08.2018թ., իսկ անգործության ժամկետը համաձայն օրենքի պետք է լրանար 08.08.2018թ. ներառյալ, ուստի հնարավոր չէ սույն բողոքի շրջանակներում հաստատված համարել Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու անգործության ժամկետի խախտման փաստը, քանի որ այն դեռևս չէր լրացել և պարզ չէ թե արդյոք պատվիրատուն նման խախտում թույլ կտար թե՛ ոչ», և բողոքը մերժել է:</p>	<p>վատահույություն ու հավաստի չներշնչող հիմնավորումներով ներկայացված բողոքը մերժվել է:</p>	
5	ԳԲԽ-ՍՑ-ԷՍ-2017/48	<p>Սարգիս Թադևոսյան ԲԱ 28.11.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ «Երևանի հ. 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Պատվիրատու), կողմից դահլիճային բազկաթոռների ձեռքբերման նպատակով կազմակերպված «129 ԴՊ-ԳՀԱԽԾԲ-17/1» ծածկագրով ընթացակարգ (այսուհետև՝ ընթացակարգ) հրավերի պայմանագրի նախագծի համար 1 հավելվածում ապրանքների մատակարարման ժամկետը նշել է 10 օր: Ըստ բողոք ներկայացնողի՝ գնման առարկա հանդիսացող դահլիճային բազկաթոռներ ՀՀ ներկրելու կամ այն Հայաստանում արտադրելու համար առնվազն 2 ամիս է անհրաժեշտ, հետևաբար 10 օրացուցային օրում ապրանքը հնարավոր կլինի մատակարել միայն այն դեպքում, եթե ընտրված մասնակիցը նախապես տեղեկացված լինի գնման առարկայի բնութագրի մասին: Պատվիրատուի կողմից 10-րյա մատակարարման ժամկետ սահմանելով ստեղծվել են անհավասար մրցակցային պայմաններ: Խնդրել է չեղյալ համարել «129 ԴՊ-ԳՀԱԽԾԲ-17/1» ծածկագրով ընթացակարգը և հայտարարել նոր ընթացակարգ՝ սահմանելով մատակարարման ողջամիտ ժամկետ:</p>	<p>Բողոքարկման խորհուրդը արձանագրելով, որ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը հաստատելով «129ԴՊ-ԳՀԱԽԾԲ-17/1» ծածկագրով գնման առարկայի տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցը, չի խախտել գնումների մասին օրենսդրության պահանջները, քանի որ չկա որևէ սահմանափակում ապրանքի մատակարարման ժամկետ սահմանելու համար: Որոշել է բողոքը մերժել:</p>	<p>Օգտվելով դրանից, որ գնումները կարգավորող իրավական ակտերով չի սահմանվում ապրանքների մատակարարման նվազագույն կոնկրետ (ողջամիտ) ժամկետ, սույն գործով Բողոքարկման խորհուրդը բողոքը մերժել է, իսկ նույն հիմքերով բողոք քննող անձ Մհեր Անանյանը, «Գարֆ» ՍՊԸ-ի բողոքը՝ 26.12.2017թ. թիվ ԳԲԽ ԱՍ-2017/49 որոշումով բավարարել է: Փաստորեն, երկու նմանատիպ գործերով Բողոքարկման խորհուրդը կայացրել է իրար հակասող որոշում, որը կարող է ենթադրել կոռուպցիոն ռիսկեր:</p>	<p>11.12.17թ. ԳԲԽ-ՍՑ-ԷՍ-2017/48 Էղիկ Սարգսյան</p>

